



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան

01.04.2022թ.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ
ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2022/27

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Ռ. Մկրտչյանի

Պատվիրատու՝ ՀՀ պաշտպանության նախարարություն
Բողոք բերող՝ «Մեդէքսպերտ» ՍՊԸ

Մասնակցությամբ՝

ՀՀ պաշտպանության նախարարության ներկայացուցիչներ՝ Հ. Մելիքյանի, Վ.
Մահտեսյանի, Ա. Նազարյանի, Վ. Վահանյանի,
«Մեդէքսպերտ» ՍՊԸ-ի ներկայացուցիչ՝ Գ. Խաչատրյանի,

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝

«ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-22-9/16» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ,
լաբորատոր ազդանյութերի և պարագաների ձեռքբերում

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ նաև՝ Բողոքներ
քննող անձ), քննության առնելով «Մեդէքսպերտ» ՍՊԸ-ի (այսուհետ նաև՝ Ընկերություն)
կողմից 11.03.2022թ.-ին ներկայացրած բողոքը (այսուհետ նաև՝ բողոք) և կից
փաստաթղթերը,

Պ Ա Ր Ձ Ե Ց

1. Գործի նախապատմությունը.

Դիմելով ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին՝ Ընկերությունը ներկայացրած բողոքով խնդրել է պարտավորեցնել «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-22-9/16» ծածկագրով գնանշման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին չկայացած հայտարարել «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-22-9/16» ծածկագրով գնանշման ընթացակարգը:

Բողոքներ քննող անձին «Մեդէքսպերտ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված բողոքը մակագրվել է 11.03.2022թ.-ին:

14.03.2022թ.-ին www.gnumner.am կայքում հրապարակված հայտարարությամբ ներկայացված բողոքը ընդունվել է վարույթ և տրվել է թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2022/27 համարի ծածկագիրը:

18.03.2022թ.-ին, 23.03.2022թ.-ին և 01.04.2022թ.-ին նշանակվել և հրավիրվել են նիստեր:

Գործի քննությունն ավարտվել է 23.03.2022թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 01.04.2022թ.-ին:

2. «Մեդէքսպերտ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.

«Մեդէքսպերտ» ՍՊԸ-ն 11.03.2022թ.-ին ներկայացրած բողոքով հայտնել է հետևյալը.

««ՀՀ պաշտպանության Նախարարություն»-ը լաբորատոր ազդանյութերի և պարուզաների գնման նպատակով հրապարակել է «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-22-9/16» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ:

«Ծանոթություն» բաժնում Պարվիրատուի կողմից մասնավորապես դրվել են հետևյալ պահանջները:

«1.2 Եվրամիության և/կամ ԵԱՏՄ երկրներից որևէ մեկում և/կամ ԱՄՆ-ում և/կամ Ճսպոնիայում ապրանքների գրանցման հավաստագիր Բացառություն են կազմում ՀՀ-ում արտադրված ապրանքները:

1 3 Պիտանելիության ժամկետ ունեցող ասպրանքների դեպքում՝ դրանք հանձնման պահին պետք է ունենան ընդհանուր պիտանելիության ժամկետի առնվազն 1/2-ը:

2 Պայմանագրի կատարման փուլում մատակարարը ասպրանքի մատակարարված խմբաքանակի հետ պետք է ներկայացնի:

2 1 Խմբաքանակն ուղեկցող որսկը հավաստող փաստաթուղթ՝ փորձարկման արձանագրություն (կամ հավաստագիր) կամ որակի հավաստագիր (կամ անձնագիր) կամ խմբաքանակի հավաստագիր կամ փոխառ խմբաքանակի որակը հավաստող այլ փաստաթուղթ՝ տրված համապատասխան իրավասու մարմնի կողմից:

2 4 Մատակարարված ասպրանքի մակնշման մեջ կամ ուղեկցող փաստաթղթերում սույն տեղեկատվության հիման վրա «1.3» կետի համապատասխանությունը որոշելու անհնարինության դեպքում՝ մատակարարված ասպրանքների «1.3» կետին համապատասխանությունը հավաստող փաստաթուղթ՝ տրված արտադրողի կամ նրա պաշտոնական ներկայացուցիչի կողմից:»:

ա. Վերոնշյալ պահանջներից 1.2 կետում նշված պահանջը խոչընդոտում է ԵԱՏՄ երկրներում գրանցված ասպրանքատեսակ առաջարկող ընկերությունների մասնակցությունը սույն ընթացակարգին, մասնավորապես 1.2 կետով պահանջվող փաստաթղթի անվանումը «գրանցման հավաստագիր» է, մինչդեռ ԵԱՏՄ երկրներում գրանցված ասպրանքների համար տրվում է ԳՐԱՆՑՄԱՆ ՎԿԱՅԱԿԱՆ, այլ ոչ թե հավաստագիր.

բ. Վերոնշյալ պահանջներից 2.1 կետում նշված պահանջը խոչընդոտում է մրցակցությանը, քանի որ ընթացակարգին կարող է մասնակցել միայն արտադրող ընկերության պաշտոնական ներկայացուցիչը, իսկ վերավաճառող ընկերություններից ձեռք բերված ասպրանք մատակարարող ընկերությունները զրկվում են այդ իրավունքից, քանի որ պատվիրատուի պահանջած խմբաքանակի վերաբերյալ փաստաթղթերը հասանելի են միայն արտադրողի պաշտոնական ներկայացուցչին.

գ. Վերոնշյալ պահանջներից 2.4 կետում նշված պահանջը խտրական է, քանի որ արտադրողի ներկայացուցիչը առավելություն է ստանում վերավաճառող ընկերությունից ասպրանք ձեռք բերած ընկերության նկատմամբ, մասնավորապես պատվիրատուն պահանջում է, որ ասպրանքի պիտանելիության ժամկետի վերաբերյալ փաստաթուղթը տրված լինի հենց արտադրողի կամ նրա պաշտոնական ներկայացուցչի կողմից, այսինքն վերավաճառող ընկերությունից ձեռք բերված ասպրանքը համակցված բաց, հասանելի աղբյուրներից ձեռք բերված փոխառ մոդելի ասպրանքի պիտանելիության ժամկետի վերաբերյալ փաստաթղթով, անընդունելի են պատվիրատուի համար:

դ. Գնման ժամանակացույցի «մատուցարարման ժամկետը» սյունակներից առաջինում որպես մատուցարարման ժամկետ գրված է «2-րդ եռամսյակ», ինչը նշանակում է, որ պատվիրատուն կարող է պահանջել ապրանքների մատուցարարում սկսած ապրիլի 1-ից, ինչն անհրազոր չէ: Այսպես հերթական անգամ պատվիրատուն սողանք է թողել, մասնավորապես իր համար նախընտրելի մատուցարարներին հնարավորություն է տալու ապրանքը մատուցարարել երկրորդ եռամսյակի մեջ գտնվող ցանկացած ամսաթվի, սակայն իր համար ոչ նախընտրելի մատուցարարներից պահանջելու է մատուցարարում հենց ապրիլի 1-ից՝ «հիմնավորելով հրատապ կարիքով կամ սրտեղծված արտակարգ իրավիճակով» կամ մեկ այլ հերթական պատճառաբանությամբ:

ե. 2022թ մարտի 6-ին հարցում է ուղարկվել պատվիրատուին, որին ի պատասխան մարտի 7-ին ստացվել են հետևյալ պարզաբանումները.

«4 կետ. Իրավասու մարմին է համարվում այն մարմինը, որը օժտված է տվյալ փաստաթուղթը կազմելու և տրամադրելու իրավունքով: Օրինակ՝ փորձարկման արձանագրություն իրավասու է տրամադրել համապատասխան փորձաքննություն իրականացնող մարմինը, իսկ համապատասխանության հավաստագիր իրավասու է տրամադրել հավաստագրող մարմինը: Վերավաճառք իրականացնող կազմակերպությունը կարող է դիտարկվել որպես իրավասու մարմին, եթե այն Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան՝ արտադրողի կողմից սուսցել է իր անունից գործելու և սահմանված պարտավորությունների շրջանակներում խնդիրները լուծելու գրավոր թույլտվություն և գործում է ստացված իրավասությունների շրջանակներում:

5 կետ. 2.1 կետում նշված «կամ տվյալ խմբաքանակի որակը հավաստող այլ փաստաթուղթ՝ տրված համապատասխան իրավասու մարմնի կողմից» պահանջում «այլ փաստաթուղթը» նշանակում է, որ հանձնման պահին կարող է ներկայացվել «Հրավերի» 2.1 կետում թվարկված փաստաթղթերի փոխարեն ցանկացած այլ փաստաթուղթ, որը կհավաստի մատուցարարված ապրանքի խմբաքանակի որակը և տրված կլինի իրավասու մարմնի կողմից: Արտադրողի կողմից տրված հայտարարագիրը կարող է համարվել այդպիսի փաստաթուղթ եթե տրված կլինի մատուցարարված խմբաքանակի համար:

6. կետի առնչությամբ հայտնում եմ, որ ուղեկցող փաստաթղթեր համարվում են. Մատուցարարված ապրանքի հետ ներկայացված՝ «Հրավերի» ծանոթություն բաժնի 2.1 կետում նշված փաստաթղթերը կամ մատուցարարված ապրանքի գործարանային փաթեթավորման մեջ առկա օգտագործման ձեռնարկը:

7. Կերփի առնչությամբ հայտնում եմ, որ ապրանքների ընդունման գործընթացն իրականացվելու է փվյալ պահին գործող «ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար գնումների գործընթացի շրջանակներում մատակարարվող ապրանքների ընդունման և մուտքագրման կարգի» համաձայն, ինչը չի կարող սույն հրավերով չնախատեսված խոչընդոտ կամ լրացուցիչ պարտավորություն առաջացնել մատակարար կամակերպության համար:

2. Բողոքի փաստացի և. իրավանան հիմքերը

ա. ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳԵՐՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ ՎԿԱՅԱԿԱՆԻ ՄԻԱՍՆԱԿԱՆ ՁԵՎԸ ԵՎ ԴՐԱ ԼՐԱՑՄԱՆ ԿԱՆՈՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀՀ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 27-Ի N 397-Ն ՀՐԱՄԱՆՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՀՀ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐԻ 21 հունիսի 2019 թ. N 425-Ն ՀՐԱՄԱՆ-ում հստակ գրված է այն փաստաթղթի անվանումը, որը տրվում է ԵԱՏՄ երկրներում գրանցված ապրանքի համար: Այդ փաստաթղթի անվանումը ՎԿԱՅԱԿԱՆ է, մինչդեռ պատվիրատուն պահանջում է հավաստագիր: Սա նշանակում է, որ ԵԱՏՄ երկրներում գրանցված ապրանքը պատվիրատուն կարող է չընդունել՝ պատճառաբանելով, որ պահանջվել է հավաստագիր, այլ ոչ թե վկայական:

բ. 2.1 կետում նշված պահանջը խոչընդոտում է մրցակցությանը, քանի որ ընթացակարգին կարող է մասնակցել միայն արտադրող ընկերության պաշտոնական ներկայացուցիչը, իսկ վերավաճառող ընկերություններից ձեռք բերված ապրանք մատակարարող ընկերությունները զրկվում են այդ իրավունքից, քանի որ պատվիրատուի պահանջած խմբաքանակի վերաբերյալ փաստաթղթերը հասանելի են միայն արտադրողի պաշտոնական ներկայացուցչին, ուստի խախտվում են «Գնումների մասին» ՀՀ օրենքի Հոդված 13-ի 2 կետի 2 ենթակետի պահանջները «2 Գնման առարկայի բնութագրերը՝ ... 2) չպետք է հանգեցնեն գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացմանը.»:

Պատվիրատուն այս պահանջը դրել է մեկ նպատակով: Պատվիրատուն ցանկանում է ստեղծել փակ շղթա, որտեղ անհնար կլինի մուտք գործել վերավաճառող ընկերությունների ապրանքով: Անշուշտ պատվիրատուն բերելու է մի շարք պատճառաբանություններ, ցույց է տալու իր «մտահոգությունը» մատակարարված ապրանքի վերաբերյալ և ձգտելու է ամեն կերպ ցույց տալ, որ հենց փվյալ խմբաքանակի

համար փրված փաստաթղթերն են հանդիսանում որակի միակ երաշխիքը, հենց այդ փաստաթուղթը եղավ, ուրեմն որակի և անվտանգության հարցը փակված է: Իրականում, ինչպես արդեն նշեցինք, պատվիրատուն ձգտում է այնպես անել, որ առանց արտադրողի կամ նրա պաշտոնական ներկայացուցչի իմացության և թույլտվության ապրանք չներմուծվի Հայաստան: Այստեղ հարց է ծագում, թե ինչը կարող է խանգարել վերավաճառող ընկերությանը ձեռք բերել պատվիրատուի պահանջած խմբաքանկի փաստաթղթերը արտադրողից: Պատասխանը հետևյալն է: Միջազգային ճանաչում ունեցող արտադրողները աշխատում են դիստրիբյուտորական ցանցով, այսինքն ամեն երկրում կամ փարածաշրջանում նշանակում են դիստրիբյուտորներ՝ պաշտոնական ներկայացուցիչներ: Օրինակ եթե ՀՀ-ում գտնվող որևէ առևտրային ընկերություն որոշի նամակ գրել գործարանին՝ ցանկանալով ձեռք բերել ապրանք, ապա գործարանը նամակը վերահասցեավորում է փվյալ երկրում նշանակված դիստրիբյուտորին: Եթե ՀՀ-ում գտնվող առևտրային ընկերությունը նամակ գրի այլ երկրի դիստրիբյուտորին, ապա վերջինս չի վաճառի ապրանք ՀՀ-ում գտնվող ընկերությանը, քանի որ արտադրողի քաղաքականությունն այնպիսին է, որ դիստրիբյուտորները պետք է մուտք չգործեն այլ երկրների դիստրիբյուտորների շուկա: Այլ կերպ ասած, շուկան բաժանված է փարածաշրջանների և ամեն դիստրիբյուտոր գործում է իրեն կցված երկրում կամ փարածաշրջանում: Երբ ՀՀ-ում գտնվող առևտրային ընկերությունը ցանկանա ձեռք բերել պատվիրատուի պահանջած խմբաքանակի փաստաթուղթը, ապա ստիպված է նամակ գրել արտադրողին, քանի որ այդ փաստաթուղթը կարող է փալ միայն արտադրողը, որն էլ բնականաբար չի փրամադրի այդ փաստաթուղթը, քանի որ փվյալ երկրում արդեն ունի դիստրիբյուտոր և գործող դիստրիբյուտորի փոփոխության շահերին վնասող քայլ չի կատարի:

Ստացվում է մի իրավիճակ, երբ ՀՀ-ում գտնվող առևտրային ընկերությունը եթե նույնիսկ զգայիորեն մատչելի 'գնով ապրանք ձեռք բերի վերավաճառող ընկերությունից և փորձի մատակարարել պաշտպանության նախարարությանը, ապա վերջինս չի ընդունելու ապրանքը, քանի որ այնպիսի փաստաթուղթ է պահանջում, որը գտնվում է միայն արտադրողի մոտ: Տվյալ իրավիճակից օգտվում է արտադրողի պաշտոնական ներկայացուցիչը, քանի որ առանց որևէ մրցակցի, բնականաբար ուռճացված գնով ապրանք է վաճառում պատվիրատուին: Այսինքն պատվիրատուն նախընտրում է ուռճացված գնով ապրանք ձեռք բերել պաշտոնական ներկայացուցչից, քան զգայիորեն մատչելի գնով այլ ընկերությունից, որը նույն արտադրողի նույն ապրանքը ձեռք է բերել վերավաճառողից:

Պատվիրատուի այսպիսի պահանջների դեպքում բացառվում է մրցակցությունը, քանը որ արդեն հենց սկզբից նախապատվությունը տրվում է գործարանի պաշտոնական ներկայացուցին:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ սույն ընթացակարգում նույնությամբ ներառված են ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-22-9/9 ծածկագրով ընթացակարգի չափաբաժինները և այդ ընթացակարգի միակ մասնակցի հավելված 1.1-ում յուրաքանչյուր չափաբաժնի դիմաց նշված է մեկ արտադրողի անվանում, ապա մեր մոտ հիմնավոր կասկած է առաջանում, որ «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-22-9/16» ընթացակարգի յուրաքանչյուր չափաբաժնի տեխնիկական բնութագրերին բավարարում է միայն մեկ արտադրող, ինչը հակասում է ՀՀ Կառավարության 04 մայիսի 2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված Կարգի 22-րդ կետով սահմանված պահանջին:

«22. Գնման առարկայի բնութագրերը սահմանելիս պետք է հաշվի առնել, որ դրանց պետք է բավարարեն մեկից ավելի հնարավոր մասնակիցներ և արտադրողներ՝ բացառությամբ գնումը սույն կարգի 23-րդ կետի 4-րդ ենթակետով նախատեսված հիմքով կատարելու դեպքերի:»:

գ. Ապրանքի պիտանիության ժամկետը պարզելու համար պատվիրատուն պահանջում է, որ այդ փաստաթուղթը տրված լինի հենց արտադրողի կամ նրա պաշտոնական ներկայացուցչի կողմից, այսինքն վերավաճառող ընկերությունից ձեռք բերված ապրանքը համակցված բաց, հասանելի աղբյուրներից ձեռք բերված տվյալ մոդելի ապրանքի պիտանիության ժամկետի վերաբերյալ փաստաթղթով, անընդունելի են պատվիրատուի համար: Պատվիրատուի կողմից այսպիսի պահանջի սահմանումը հանգեցնում է նրան, որ վերավաճառող ընկերությունից ձեռք բերված ապրանքը, որն օրինակ ելնելով իր առանձնահատկություններից պարունակում է միայն պիտանելիության ժամկետի ավարտի վերաբերյալ տեղեկություններ, չի կարող մատակարարվել ՊՆ ին բաց աղբյուրներից ձեռք բերված փաստաթղթով, որը հավաստում է ապրանքի պիտանելիության ժամկետը: Այսինքն օրինակ եթե մատակարարվել է կատետր, որի տուփի վրա առկա մակնշմամբ հնարավոր չէ պարզել պիտանելիության ժամկետի ավարտը, ապա բաց աղբյուրներում հասանելի այդ նույն մոդելի, նույն արտադրողի ձեռնարկը հիմք չի ընդունվելու ՊՆ կողմից: Նման պահանջը խոչընդոտում է մրցակցությանը՝ արտոնություն տալով արտադրողի պաշտոնական ներկայացուցչին:

դ. Գնման ժամանակացույցի «մատակարարման ժամկետը» սյունակներից առաջինում որպես մատակարարման ժամկետ գրված է «2-րդ եռամսյակ», ինչը նշանակում

է, որ պատվիրատուն կարող է պահանջել ապրանքների մատակարարում սկսած ապրիլի 1-ից, ինչն անհրազործելի է: Այստեղ հերթական անգամ պատվիրատուն սողանք է թողել, մասնավորապես իր համար նախընտրելի մատակարարներին հնարավորություն է տալու ապրանքը մատակարարել երկրորդ եռամսյակի մեջ գտնվող ցանկացած ամսաթվի, սակայն իր համար ոչ նախընտրելի մատակարարներից պահանջելու է մատակարարում հենց ապրիլի 1-ից՝ «հիմնավորելով հրատապ կարիքով կամ ստեղծված արտակարգ իրավիճակով» կամ մեկ այլ հերթական պատճառաբանությամբ. Տվյալ դեպքում խախտվելու է Գնումների գործընթացների կազմակերպման 2017 թվականի մայիսի 4-ի ՀՀ կառավարության 4 մայիսի N 526-Ն որոշմամբ սահմանված մատակարարման առաջին փուլի նվազագույն 20 օր ժամկետի պահանջը:

ե. Համաձայն պատվիրատուի կողմից տրված պարզաբանման

«Վերավաճառք իրականացնող կազմակերպությունը կարող է դիտարկվել որպես իրավասու մարմին, եթե այն Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան՝ արտադրողի կողմից ստացել է իր անունից գործելու և սահմանված պարտավորությունների շրջանակներում խնդիրները լուծելու գրավոր թույլտվություն և գործում է ստացված իրավասությունների շրջանակներում:

5 կետ 2.1 կետում նշված «կամ տվյալ խմբաքանակի որակը հավաստող այլ փաստաթուղթ՝ տրված համապատասխան իրավասու մարմնի կողմից» պահանջում «այլ փաստաթուղթը» նշանակում է հանձնման պահին կարող է ներկայացվել «Հրավերի» 2.1 կետում թվարկված փաստաթղթերի փոխարեն ցանկացած այլ փաստաթուղթ, որը կհավաստի մատակարարված ապրանքի խմբաքանակի որակը և տրված կլինի իրավասու մարմնի կողմից: Արտադրողի կողմից տրված հայտարարագիրը կարող է համարվել այդպիսի փաստաթուղթ եթե տրված կլինի մատակարարման խմբաքանակի համար:

6. կետի առնչությամբ հայտնում են, որ ուղեկցող փաստաթղթեր համարվում են. Մատակարարված ապրանքի հետ ներկայացված՝ «Հրավերի» ծանոթություն բաժնի 2.1 կետում նշված փաստաթղթերը կամ մատակարարված ապրանքի գործարանային փաթեթավորման մեջ առկա օգտագործման ձեռնարկը:»:

Առաջին հայացքից թվում է, թե պատվիրատուն շատ լայն հնարավորություններ է տվել մասնակիցներին, սակայն մանրամասն ուսումնասիրելուց հետո պարզվում է, որ պատվիրատուի նշած «ցանկացած» փաստաթուղթը իրականում ցանկացած փաստաթուղթ չէ, օրինակ վերցված բաց աղբյուրներից: Պատվիրատուի պահանջած «ցանկացած» փաստաթուղթը պետք է տրված լինի իրավասու մարմնի կողմից, որն ըստ պատվիրատուի ի

վերջո արտադրողն է կամ նրա ներկայացուցիչը: Ստացվում է, որ ՊՆ կողմից ամեն ինչ արվում է, որպեսզի բացի արտադրող գործարանի պաշտոնական դիստրիբյուտորներից որևէ այլ ընկերություն չկարողանա մասնակցել ընթացակարգին, այսինքն իրենց համար անընդունելի է այնպիսի ապրանքների մատակարարումը, որոնք ձեռք են բերվել վերավաճառողներից:

Օգտագործման ձեռնարկի մասով պատվիրատուի կողմից տրված պարզաբանումը հակասական է, մի կողմից թվարկվում են այս պահանջները «2.1 Խմբաքանակն ուղեկցող որակը հավաստող փաստաթուղթ՝ փորձարկման արձանագրություն (կամ հավաստագիր) կամ որակի հավաստագիր (կամ անձնագիր) կամ խմբաքանակի հավաստագիր կամ տվյալ խմբաքանակի որակը հավաստող այլ փաստաթուղթ՝ տրված համապատասխան իրավասու մարմնի կողմից», իսկ մյուս կողմից որպես այդ փաստաթղթերի այլընտրանք սահմանվում է մատակարարված ապրանքի գործարանային փաթեթավորման մեջ առկա օգտագործման ձեռնարկը:

Բացի այդ, վիճահարույց է պատվիրատուի այն պահանջը, որ մատակարարված ապրանքի գործարանային փաթեթավորման մեջ պետք է լինի օգտագործման ձեռնարկը, այսինքն բաց աղբյուրներից ձեռք բերված ձեռնարկը ընդունելի չէ պատվիրատուի համար:»:

Ելնելով վերոգրյալից՝ Ընկերությունը Բողոքներ քննող անձին խնդրել է Պարտավորեցնել «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-22-9/16» ծածկագրով գնանշման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին չկայացած հայտարարել «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-22-9/16» ծածկագրով գնանշման ընթացակարգը:

Ընկերությունը, 22.03.2022թ.-ին ներկայացրած բողոքի լրացմամբ հավելել է հետևյալը.

« Ի պատասխան ՀՀ պաշտպանության նախարարության առարկությունների, որը ստացել ենք մարտի 17-ին ժամը 18:05-ին, հայտնում ենք հետևյալը:

10 հոկտեմբերի 2019 թվականի N 1422-Ն ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 4-Ի N 526-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՅՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅՄԲԵՐԻ 16-Ի N 1454-Ն ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՅՐԱԾ ՃԱՆԱԶԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ 21-րդ կետի 1-ին ենթակետի ա. պարբերությունում սահմանված է հետևյալը

«ա. գնման առարկայի բնութագրերը: Ապրանքների գնման դեպքում նշվում է նաև մասնակցի կողմից առաջարկվող ապրանքային նշանի, ֆիրմային անվանման, մակնիշի և արտադրողի վերաբերյալ տեղեկատվության ներկայացման անհրաժեշտությունը, իսկ պայմանագրի կատարման փուլում ապրանքն արտադրողից կամ վերջինիս ներկայացուցչից երաշխիքային նամակի կամ համապատասխանության սերտիֆիկատի ներկայացման անհրաժեշտությունը, եթե դրանք կիրառելի են տվյալ ապրանքի համար: Ընդ որում, պայմանագրի կատարման փուլում այն կնքած մասնակցից ծագման երկրի սերտիֆիկատը չի պահանջվում.»:

Այստեղից պարզ է դառնում, որ ՀՀ կառավարությունը հստակ կերպով սահմանել է այն փաստաթղթերի կոնկրետ անվանումները, որոնք անհրաժեշտության դեպքում, Վաճառողը պետք է ներկայացնի Պատվիրատուին պայմանագրի կատարման փուլում:

ՀՀ ՊՆ-ի կողմից Հրավերի «ՏԵՄՆԻԿԱԿԱ ԲՆՈՒԹԱԳԻՐ» Հավելված թիվ 1-ի Ծանոթության 2-րդ կետի 2.1 ենթակետով սահմանված են հետևյալ պահանջները՝

« 2. Պայմանագրի կատարման փուլում մատակարարը ապրանքի մատակարարված խմբաքանակի հետ պետք է ներկայացնի.

2.1 խմբաքանակն ուղեկցող որակը հավաստող փաստաթուղթ փորձարկման արձանագրություն (կամ հավաստագիր) կամ որակի հավաստագիր (կամ անձնագիր) կամ խմբաքանակի հավաստագիր կամ տվյալ խմբաքանակի որակը հավաստող այլ փաստաթուղթ տրված համապատասխան իրավասու մարմնի կողմից:»:

Այդ պահանջները չեն համապատասխանում պայմանագրի կատարման փուլում անհրաժեշտության դեպքում, ներկայացվելիք փաստաթղթերի այն կոնկրետ անվանումներին, որոնք սահմանված են գործադրի կողմից, կազմված են ՀՀ Կառավարության 2017 թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշման 21-րդ կետի 1-ին ենթակետի ա. պարբերությունով սահմանված պահանջների խախտումներով, ուստի հրավերի ընթացակարգը պետք է չկայացած հայտարարվի, քանի որ հրավերի «ՏԵՄՆԻԿԱԿԱ ԲՆՈՒԹԱԳԻՐ» Հավելված թիվ 1-ի Ծանոթության պահանջները վերաբերվում են հրավերի բոլոր չափաբաժիններին:

Սկորն ներկայացնում ենք մեր դիտարկումները ՊՆ առարկությունների վերաբերյալ ըստ կետերի:

1. Իր դիրքորոշման մեջ պաշտպանության նախարարությունը նշում է, որ իր համար էական չէ փաստաթղթի անվանումը, այլ էական է ապրանքի գրանցված լինելու փաստը: Իրականում պաշտպանության նախարարության համար խիստ կարևոր է փաստաթղթի

հենց անվանումը, այլ ոչ թե բովանդակությունը և եթե պաշտպանության նախարարության համար որևէ անցանկալի ընկերություն համարձակվի ապրանքի ընդունման ժամանակ ներկայացնել պաշտպանության նախարարության պահանջած փաստաթղթի անվանումից թեկուզ աննշան փարբերվող, սակայն համարժեք փաստաթուղթ, ապա պաշտպանության նախարարության ներկայացուցիչներն իսկույն կմերժեն այդ ապրանքի ընդունումը, պատճառաբանելով որ իրենք այլ փաստաթուղթ են պահանջել, սակայն մատակարարը ներկայացրել է մեկ այլ փաստաթուղթ: Սա մեր ենթադրությունը չէ, այլ մեր և ներկայացուցչի ներկայությամբ տեղի ունեցած կոնկրետ դրվագ, կոնկրետ փաստ, մասնավորապես պաշտպանության նախարարության հետ կնքված պայմանագրի շրջանակներում մատակարար ընկերություններից մեկը ներկայացրել էր համապատասխանության հայտարարագիր, սակայն պաշտպանության նախարարության ներկայացուցիչները մերժել են ապրանքի ընդունումը, օրինակ պատճառաբանելով, որ իրենց պետք է ներկայացնել համապատասխանության հավաստագիր, այլ ոչ թե հայտարարագիր: Այսինքն, չնայած այն փաստին, որ համապատասխանության հավաստագիրը և համապատասխանության հայտարարագիրը ունեն հավասար իրավաբանական ուժ և հաստատում են ապրանքի համապատասխանությունը, պաշտպանության նախարարությունը հստակ փարբերակում է դնում այդ երկու փաստաթղթերի միջև, հետևաբար այս բողոքարկվող ընթացակարգի շրջանակներում պաշտպանության նախարարության ներկայացուցիչների այն պնդումները, որ իրենց համար էական չէ փաստաթղթի անվանումը, չի համապատասխանում իրականությանը և ընդամենը նպատակ է հետապնդում բողոք քննող անձի մոտ տպավորություն ստեղծել, թե իրենք բաց են համագործակցության համար, չեն ստեղծում անհարկի խոչընդոտներ ապրանքի ընդունման գործընթացում:

Հւստորդ պարբերությամբ, պաշտպանության նախարարությունը նշում է, որ համաձայն bararanonlone.com կայքի, հավաստագիր և վկայական բառերը հոմանիշներ են: Մեր ընկերության համար սկզբում անսպասելի էր, որ ՀՀ պաշտպանության նախարարությունը երկարատև փնտրություններից հետո «գտավ» իր համոզիչ փաստարկը հենց bararanonlone.com կայքում, սակայն հետո վերհիշելով ապրանքը չընդունելու համար ՀՀ պաշտպանության նախարարության որոշ ներկայացուցիչների բերած փաստարկները, կրկին համոզվեցինք, որ ձեռագիրն այնուամենայնիվ անփոփոխ է:

Հարկ է նշել, որ ի փարբերություն ՀՀ պաշտպանության նախարարության ներկայացուցիչների, որոնց համար օրինաչափ է հիմք ընդունել bararanonlone.com կայքը, ինչպես ևսև հղումներ անել այդ կայքի վրա, մեր ընկերությունը, ներկայացված բողոքի

հիմնավորման համար հղում է կատարել ՀՀ-ում գործող նորմատիվ իրավական ակտին ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳԵՐՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ ՎԿԱՅԱԿԱՆԻ ՄԻԱՄՆԱԿԱՆ ՁԵՎԸ ԵՎ ԴՐԱ ԼՐԱՑՄԱՆ ԿԱՆՈՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀՀ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 27-Ի N 397-Ն ՀՐԱՄԱՆՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱԶԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՀՀ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐԻ 21 հունիսի 2019 թ. N 425-Ն ՀՐԱՄԱՆԻՆ:

Բացի այդ, եթե ՀՀ ՊՆ համար կարևոր չլիներ փաստաթղթի անվանումը, ապա կարող էին գրել գրանցումը հաստատող փաստաթուղթ, ինչպես վարվել են 2.1 և 2.4 կետերում, սակայն ՀՀ ՊՆ-ն միտումնավոր որոշել է գրել ՀԱՎԱՍՏԱԳԻՐ, դրանով ստեղծելով լծակ անցանկալի մատակարարից ազատվելու համար, ինչպես արդեն առնվազն մեկ անգամ վարվել է:

Պաշտպանության նախարարության ներկայացուցիչները, հրավիրված նիստի ժամանակ հավանաբար հասկանալով, որ bararanonline.com կայքի վրա հղում անելը մեղմ ասած իրավաչափ չէ, փորձեցին գտնել գեթ մեկ նորմատիվ իրավական ակտ, որը կհերքեր մեր դիրքորոշումը, մասնավորապես մեջբերեցին Եվրասիական տնտեսական միության շրջանակներում բժշկական արտադրատեսակների (բժշկական նշանակության արտադրատեսակների և բժշկական տեխնիկայի) շրջանառության միասնական սկզբունքների և կանոնների մասին ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐԸ, մատնանշելով Հոդված 4-ի կետ 6-ի առաջին նախադասությունում առկա «գրանցման հավաստագիր» տերմինը՝ դրանով ցանկանալով ցույց տալ բողոք քննող անձին, թե որտեղից են վերցրել գրանցման հավաստագիր տերմինը:

Հարկ է նշել, որ սա անհաջող փորձ էր նրանց կողմից, քանի որ պաշտպանության նախարարության աշխատակիցները կամ չեն կարդացել կամ ցույց են տալիս, թե չեն կարդացել հենց իրենց մեջբերած համաձայնագրի Հոդված 4-ի կետ 6-ի երկրորդ նախադասությունը, որտեղ գրված է հետևյալը «Գրանցման հավաստագրի ձևը և այն լրացնելու կարգը սահմանվում են Հանձնաժողովի կողմից»: Իսկ թե ինչ ձև է սահմանել հանձնաժողովը, կներկայացնենք ստորև, սակայն նախքան այդ մի պահ կանգ առնենք պաշտպանության նախարարության ներկայացուցիչների վկայակոչած համաձայնագրի վրա:

Պաշտպանության նախարարության ներկայացուցիչները ցույց են տալիս թե իբր տեղյակ չեն, որ իրենց մեջբերած 2014թ. դեկտեմբերի 23-ին կնքված համաձայնագիրը,

ենթարկվել է փոփոխությունների և այդ փոփոխությունների մեջ այլևս բացակայում է գրանցման հավաստագիր տերմինը և դրա փոխարեն գրված է գրանցման ՎԿԱՅԱԿԱՆ. սակայն բնականաբար պաշտպանության նախարարության ներկայացուցիչներին դա չի հեղափոխում: Ինչպես նախորդ բողոքարկված ընթացակարգերի ժամանակ, այնպես էլ հիմա պաշտպանության նախարարության ներկայացուցիչները հղումներ են անում կամ ուժը կորցրած կամ փոփոխությունների ենթարկված նորմատիվ իրավական ակտերի վրա:

Ստորև բերված է հղում Եվրասիական տնտեսական հանձնաժողովի 2021թ դեկտեմբերի 24-ի նիստի արդյունքների վերաբերյալ պաշտոնական կայքից, <https://eec.eaeunion.org/news/itogi- soveta-eek-24-dekabrya/>, որտեղ մասնավորապես ասվում է, մեջբերում եմ.

<<На заседании Совета ЕЭК рассмотрен вопрос о внесении новых изменений в Соглашение о единых принципах и правилах обращения медицинских изделий (изделий медицинского назначения, медицинской техники) в рамках Евразийского экономического союза, которые касаются продления режима национальной регистрации на один год - до 31 декабря 2022 года. Стороны одобрили направление протокола на внутригосударственные процедуры и подписание. Протокол дополняет ранее одобренный сторонами протокол по внесению изменений в соглашение, который продлевает обращение ранее зарегистрированных медизделий до истечения срока действия их регистрационных удостоверений>> մեջբերման ավարտ: Ինչպես տեսնում ենք, որոշման մեջ գրված է գրանցման վկայական, այլ ոչ թե հավաստագիր:

Այժմ ներկայացնենք ևս մեկ հղում պաշտոնական կայքից, <http://www.eurasiancommission.org/hy/nae/news/Pages/05-04-2021-6.aspx> որտեղ հայերենով գրված է հետևյալը, մեջբերում եմ.

<<ԵՏՀ, Խորհուրդը հավանություն է տվել Եվրասիական տնտեսական միության շրջանակներում բժշկական արտադրատեսակների (բժշկական նշանակության արտադրատեսակների և բժշկական տեխնիկայի) շրջանառության միասնական սկզբունքների և կանոնների մասին 2014 թվականի դեկտեմբերի 23-ի համաձայնագրի Փոփոխություններին: Փաստաթուղթն ուղարկվել է ԵԱՏՄ երկրներ դրա ստորագրման համար անհրաժեշտ միջպետական ընթացակարգերի կատարման համար:

Փոփոխություններով նախատեսվում է, որ ԵԱՏՄ պետություններից մեկի ազգային նորմերով գրանցված բժշկական արտադրատեսակները կարող են շրջանառվել այդ

պետության փարածքում մինչև ազգային գրանցման վկայականների գործողության ժամկետի ավարտը:»> մեջբերման ավարտ:

Հաշվի առնելով վերոգրյալը, ինչպես նաև այն, որ բողոքի քննության նիստին ներկա պաշտպանության նախարարության ներկայացուցիչներից մեկը, արդեն մեկ անգամ խոչընդոտել է մատակարարված ապրանքի ընդունմանը ներկայացված փաստաթղթի հենց անվան պատճառով, ապա պարզ է դառնում, որ բառախաղերով զբաղվելը հենց պաշտպանության նախարարության որոշ ներկայացուցիչների մենաշնորհն է:

Եթե պաշտպանության նախարարության ներկայացուցիչները գտնում են, որ իրենք են ճիշտ, և ԵԱՏՄ երկրներում գրանցված բժշկական նշանակության արտադրատեսակի համար տրվում է հենց հավաստագիր, ապա միջնորդում ենք բողոք քննող անձին և մեզ ներկայացնել ուժի մեջ գտնվող այդպիսի փաստաթուղթ, այսինքն ԳՐԱՆՑՄԱՆ ՀԱՎԱՍՏԱԳԻՐ անվանումով փաստաթուղթ, ինչպես որ պահանջվել է հրավերով: Եթե պաշտպանության նախարարության ներկայացուցիչները չկարողացան ներկայացնել ուժի մեջ գտնվող այդպիսի փաստաթուղթ, ապա դա նշանակում է, որ հենց իրենց պահանջը նույնիսկ իրենք չեն կարող բավարարել:

«2. Իր դիրքորոշման մեջ պաշտպանության նախարարությանը նշում է, որ վերավաճառող ընկերությանը հասանելի են խմբաքանակի վերաբերյալ փաստաթղթերը: Այստեղ հարց է առաջանում թե ինչի վրա է հիմնված պաշտպանության նախարարության այդչափ «լավատեսությունը», այսինքն պաշտպանության նախարարությունը հանդիսանալով պատվիրատու, ինչպես կարող է բողոք քննող անձին վստահեցնել, թե արտերկրում գտնվող վերավաճառող ընկերություններին ինչ փաստաթղթեր են հասանելի: Ակնհայտ է, որ պաշտպանության նախարարության «լավատեսությունը» հիմնավորված չէ, և նման տեղեկությունների կարող է տիրապետել այն ընկերությունը, որն անմիջականորեն գործ ունի վերավաճառող ընկերության հետ և քաջատեղյակ է այն խոչընդոտներից, որոնք առաջացնում են ՀՀ այնպիսի ապրանք վաճառելիս, որի արտադրողն ունի պաշտպանության ներկայացուցիչ ՀՀ-ում: Բողոքարկման նիստի ընթացքում, պաշտպանության նախարարության ներկայացուցիչները այդպես էլ չկարողացան հիմնավորել, թե ինչու պետք է արտադրողը տրամադրի վերավաճառող ընկերությանը որևէ փաստաթուղթ, եթե դիտի, որ այդ ապրանքը մատակարարվելու է այնպիսի երկիր, որտեղ ինքն արդեն ունի բացառիկ դիստրիբյուտոր: Ակնհայտ է, որ ԲԱՑԱՌԻԿ բառը նշանակում է, որ արտադրողը տվյալ երկրում իր ապրանքը վաճառելու իրավունքները տվել է քացառապես այդ ընկերությանը իր դիստրիբյուտորին, հետևաբար խոսք գնալ չի կարող այն մասին, որ արտադրող

ընկերությունը խմբաքանակի վերաբերյալ որևէ փաստաթուղթ տրամադրի այլ վերավաճառող ընկերությանը քանի որ առնվազն շահերի բախում կլինի և բացառիկ դիսպոզիցիոնորը կկորցնի իր «բացառիկությունը»։ Այլ կերպ ասած, արտադրողը չի կարող իր տնտեսական շահերին հակառակ քայլ անել վնասելով իր բացառիկ դիսպոզիցիոնորի շահերին։

3. Իր դիրքորոշման մեջ պաշտպանության նախարարությունը աղավաղել է բողոքով ներկայացված մեր պնդումները և փորձել է փակվորություն ստեղծել, թե իրենց չի հետաքրքրում ապրանքի արտադրության ժամկետը։ Իրականում մեր համար խնդրահարույց է պաշտպանության նախարարության այն պահանջը, որ արտադրողի ձեռնարկը պետք է գտնվի հենց գործարանային փաթեթավորման մեջ։ Մեջբերում ՊՆ կողմից տրամադրված պարզաբանման տեքստից. «6. կետի առնչությամբ հայտնում են, որ ուղեկցող փաստաթղթեր համարվում են. Մատակարարված ապրանքի հետ ներկայացված «հրավերի» ծանոթություն բաժնի 2.1 կետում նշված փաստաթղթերը կամ մատակարարված ապրանքի գործարանային փաթեթավորման մեջ առկա օգտագործման ձեռնարկը։

Այստեղ առանցքային բառակապացությունը «փաթեթավորման մեջ»-ն է։ Այժմ ներկայացնենք, թե ինչ խնդիրների կարող են բխվել մատակարարները այս պահանջի պատճառով ելնելով մեր փորձից։

Դիցուք, օտարերկրյա վերավաճառող ընկերությունը ՀՀ-ում գտնվող իր գործընկերոջը մատակարարել է անհատական գործարանային ստերիլ տուփերով ախրանք։ Հարց է ծագում, ինչպես մատակարարը ապահովի ՀՀ ՊՆ պահանջը, մասնավորապես ինչպես տեղագրի օգտագործման ձեռնարկը գործարանային ստերիլ տուփի մեջ։ Բնականաբար անհնարին է օգտագործման ձեռնարկը տեղագրել գործարանային ստերիլ փաթեթավորման մեջ առանց խախտելու ստերիլությունը և փաթեթավորման ամբողջականությունը։ Իսկ եթե մատակարարը դնի ձեռնարկը սովորաբար արկղի մեջ, ապա այդ ժամանակ էլ ՊՆ ներկայացուցիչները կասեն, որ իրենք կասկածում են, որ այդ ձեռնարկը մատակարարն է դրել սովորաբար արկղի մեջ, այլ ոչ թե արտադրողը։

Բացի այդ, միայն պիտանելիության ժամկետի ավարտի մականշում ունեցող ապրանքների ընդունման համար, պաշտպանության նախարարության ներկայացուցիչները պետք է չստեղծեն չստեղծեն լրացուցիչ խոչընդոտներ և չպահանջեն այլ փաստաթղթեր, քանի որ օրինակ եթե ՀՀ ՊՆ-ն ամեն փարի գրեթե նույն քանակով ապրանքներ է ձեռք բերում, ապա ակնհայտ է, որ երեք կամ չորս փարի մնացորդային պիտանելիության

ժամկետ ունեցող ապրանքները կբավականացնեն ՀՀ ՊՆ ընդամենը մեկ տարվա կարիքները բավարարելու համար, ուստի անթույլատրելի է այդպիսի ապրանքների դեպքում լրացուցիչ փաստաթղթերի պահանջ սահմանելը:

4. Հաջորդ կետով ՀՀ պաշտպանության նախարարությունը վստահեցնում է, որ երկրորդ եռամսյակ նշանակում է, ցանկացած աշխատանքային օր այդ եռամսյակում, սակայն մեր կարծիքը հստակ շարադրված է բողոքում, ուստի չենք ցանկանում կրկին մեջբերել մեր դիրքորոշումը:

5. Հաջորդ կետով ՀՀ պաշտպանության նախարարությունը նշում է, որ մեր ընկերությունը խեղաթյուրել է իրենց կողմից տրված պարզաբանումը: հաշվի առնելով դա, մեջբերում ենք ՊՆ կողմից տրված պարզաբանման տեքստը, որից հետո կկատարենք մի քանի դիտարկումներ:

Մեջբերում. <<4 կետ. Իրավասու մարմին է համարվում այն մարմինը, որը օժտված է տվյալ փաստաթուղթը կազմելու և տրամադրելու իրավունքով: Օրինակ փորձարկման արձանագրություն իրավասու է տրամադրել համապատասխան փորձաքննություն իրականացնող մարմինը, իսկ համապատասխանության հավաստագիր իրավասու է տրամադրել հավաստագրող մարմինը: Վերավաճառք իրականացնող կազմակերպությունը կարող է դիտարկվել որպես իրավասու մարմին, եթե այն Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան արտադրողի կողմից ստացել է իր անունից գործելու և սահմանված պարտավորությունների շրջանակներում խնդիրները լուծելու գրավոր թույլտվություն և գործում է ստացված իրավասությունների շրջանակներում:>> մեջբերման ավարտ:

Այստեղ առանցքային համարվող բառերն են «եթե արտադրողի կողմից ստացել է այսինքն ՀՀ ՊՆ կողմից կոնկրետ սահմանվում է պայման, որ վերավաճառող ընկերությունը պետք է արտադրողի կողմից ստանա իր անունից գործելու և սահմանված պարտավորությունների շրջանակներում խնդիրները լուծելու գրավոր թույլտվություն: Սա ուղղակի անհեթեթություն է, քանի որ բազմաթիվ վերավաճառող ընկերություններ որևէ պարտավորություն չունեն արտադրողի նկատմամբ, հաշվետու չեն նրան այն բանից հետո, երբ ձեռք են բերում այդ ապրանքը, քանի որ ապրանքը գնելուց հետո այն այլևս չի պատկանում արտադրողին, հետևաբար այդ ապրանքը այս կամ այն երկիր վաճառելու համար արտադրողից թույլտվություն ստանալու կարիք, պարտավորություն չկա: Այստեղ զուտ փնտրասական շահերի բախման խնդիր է, որի մասին արդեն գրել ենք սույն դիրքորոշման թիվ 2 կետում:

Այժմ անդրադառնանք հրավիրված նիստի ժամանակ ՀՀ պաշտպանության նախարարության ներկայացուցիչների հնչեցրած մի բանի մտքերին:

Պարզաբանման հարցումների ուղարկման ժամերի մասով: Միտք հնչեցվեց, որ միտում են տեսնում ոչ աշխատանքային ժամին հարցում ուղարկելու մեջ: Թեև մեր ընկերությունը պարտավորություն չունի բացատրելու, թե ինչպես է ընտրում հարցում ուղարկելու օրն ու ժամը, սակայն նպատակահարմար ենք գտնում հիշեցնել, որ կոնկրետ այս ընթացակարգի վերաբերյալ հարցում է ուղարկվել մարտի 6-ին ժամը 00:54, հետևաբար պարտավորություն ուներ երկու օրացույցային օր պատասխանելու համար համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի հոդված 29-ի «Հրավերի պարզաբանումը և դրանում փոփոխություն կատարելը»:

1. Մասնակիցն իրավունք ունի հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալուց առնվազն հինգ օրացույցային օր առաջ գրավոր պահանջելու հրավերի պարզաբանում: Հարցումը կատարած մասնակցին պարզաբանումը տրամադրվում է գրավոր հարցումն ստանալու օրվան հաջորդող երկու օրացույցային օրվա ընթացքում:»: Տվյալ դեպքում պատասխանը սուսցել ենք հաջորդ օրը մարտի 7-ին, այսինքն պարզաբանումը ստացվել է սահմանված ժամկետում:

Ինչ վերաբերվում է այն հանգամանքին, որ այլ ընթացակարգերով հարցումները ուղարկվել են այնպիսի օրվա այնպիսի ժամին, որ անհնար է երկու օրացույցային օրվա ընթացքում պատասխանել և ըստ ՊՆ ներկայացուցչի դա «օրենքի բաց է», ապա այդ հարցին ամպայման կանդրադառնանք կոնկրետ այդ ընթացակարգերի քննարկան նպատակով հրավիրված նիստերի ժամանակ:

Ապրանքի որակը վերահսկելու անհրաժեշտության վերաբերյալ:

Պաշտպանության նախարարության ներկայացուցիչ Արման Նազարյանն իր բանավոր խոսքում պարբերաբար շեշտում էր մատուցարարված ապրանքի որակը վերահսկելու անհրաժեշտությունը այնպես, կարծես մեր ընկերությունը դեմ է դրան, ինչը բնականաբար այդպես չէ: Մեր համար անհասկանալի էր, թե ինչու Ա. Նազարյանը մեջբերեց նորմատիվ իրավական ակտեր, որոնք դեռ նսխագծի փուլում են: Մասնավորապես հղում արվեց 28 Հունիսի 2020, 859 - Ա «ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՄՊԱՍԱԲԿՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ԿԻՐԱՐԿՈՒՄՆ ԱՊԱՀՈՎՈՂ ՄԻՉՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՀՀ վարչապետի որոշմանը, որի հավելվածը ուսումնասիրելով պարզ է դառնում, որ Ա. Նազարյանի մեջբերած իրավական ակտը դեռ

քննարկվում է և ուժի մեջ չի մտնել, հետևաբար անհայտ է, թե ուժի մեջ մտնելու դեպքում ինչպիսի փոփոխություններ կկրի: Հաջորդ հղումը, որը կրկին կատարվեց Ա. Նազարյանի կողմից, դա Վ. Վահանյանի մատնանշած համաձայնագիրն էր, որի փոփոխություններին հավանաբար Ա. Նազարյանը ծանոթ չէ և որի մասին մանրամասն գրել ենք սույն դիրքորոշման 1 կետում: Բացի այդ, պարբերաբար մեջբերվում էր ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՄԱՍԻՆ, սակայն չէր կոնկրետացվում, թե մեր պնդումները այդ օրենքի որ կետին են հակասում: Նույնը վերաբերում է համաձայնագրին, այսինքն անհասկանալի է, թե մեր որ պնդումն է հակասում այդ համաձայնագրին:

Պարբերաբար Ա. Նազարյանի կողմից շեշտվում էր, որ գրանցման <<հավաստագրի>> իրավատերը արտադրողն է և հենց արտադրողն է պատասխանատու ապրանքի որակի համար: Այստեղ հարկանշականն այն է, որ մենք երբեք հակառակը չենք պնդել, այո, արտադրողն է պատասխանատու ապրանքի որակի համար, սակայն դա չի նշանակում, որ արգելվում է վերավաճառող ընկերությունից ձեռք բերել այդ նույն արտադրողի ապրանքը: Ա. Նազարյանի շեշտադրումները այնպիսին էին, որ եթե արտադրողն է <<հավաստագրի>> իրավատերը և որակի պատասխանատուն, ապա հենց դրանով էլ պայմանավորված իրենք պահանջում են ապրանք հենց արտադրողից: Տվյալ դեպքում ակնհայտ է, որ առաջին նախադասությունից չի բխում երկրորդը, այսինքն սխալ մեկնաբանություն է տեղի ունենում ՊՆ ներկայացուցչի կողմից:

Նիստի ավարտին միտք հնչեցվեց, որ մեջբերում եմ <<ներկայացուցիչը կարող է լինել մեկը, բայց դիստրիբյուտորները բազմաթիվ են, Roche ընկերության դիստրիբյուտորներ շատ կան դեղերի մասով, բայց ոչ ազդանյութերի:>> մեջբերման ավարտ: Տվյալ դեպքում գնման առարկան լաբորատոր ազդանյութերն են, որոնց արտադրողն էլ Roche Diagnostics ընկերությունն է, որի բացառիկ դիստրիբյուտորը ՀՀ-ում կա, հետևաբար խոսք գնալ մրցակցության մասին այստեղ չի կարող: Մի կողմից ՀՀ պաշտպանության նախարարությունը թույլ չի տալիս մատակարարել վերավաճառողից գնված ապրանք, իսկ մյուս կողմից էլ ՀՀ-ում առկա է բացառիկ դիստրիբյուտոր. Հետևաբար հարց է ծագում թե ով ում հետ պետք է մրցի. Փաստացի ձևական մրցույթ է հայտարարված:»:

Ընկերությունը, 01.04.2022թ.-ին ներկայացված մեկ այլ դիրքորոշմամբ հավելել է հետևյալը.

«Ի լրումն <<Մեղէքսպերտ>> ՍՊԸ կողմից 11.03.2022թ. ներկայացված բողոքի, հայտնում եմ հետևյալը.

1. Հրավերի <<Ծանոթություն>> բաժնի 2.1 կետի վերաբերյալ մեր բողոքին ի պատասխան, պատվիրատուի ներկայացուցիչ Վ. Վահանյանը բանավոր դիրքորոշում էր հայտնել, որ իրենց պահանջած <<խմբաքանակի որակը հավաստող այլ փաստաթուղթ>>-ը պարտադիր չէ բերել հենց արտադրողից և կարող է այդ խմբաքանակը ներկայացվել << ստանդարտների ազգային ինստիտուտ և ստանալ համապատասխան փաստաթուղթ:

Տեղեկացնում ենք Ձեզ, որ մեր ընկերությունը հարցում է ուղարկել << էկոնոմիկայի նախարարության <<Ստանդարտացման և չափագիտության ազգային մարմին>> ՓԲԸ, որտեղից մեզ գրավոր պատասխանել են, որ մեջբերում եմ <<Ստանդարտացման և չափագիտության ազգային մարմին>> ՓԲԸ-ն իրավասու չէ մատուցել բժշկական նշանակության լաբորատոր ազդանյութերի և պարագաների համապատասխանության գնահատման ծառայություններ:>>

Այսպիսով, ստացվում է մի իրավիճակ, երբ ՊՆ ներկայացուցիչը մեզ և Ձեզ վստահեցնում էր, որ իրենց պահանջած << խմբաքանակի որակը հավաստող փաստաթուղթը>> կարելի է ստանալ <<Ստանդարտացման և չափագիտության ազգային մարմին>> ՓԲԸ-ից, մինչդեռ այդ ընկերությունը հայտնում է, որ իրենք իրավասու չեն մատուցել այդպիսի ծառայություններ (նամակը կցվում է):

Մեր ընկերությունը հարցում է ուղարկել նաև << ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ <<ԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՄԱՐՄԻՆ>> ՊՈԱԿ-ին, որով մասնավորապես խնդրել ենք հայտնել, թե արդյոք <<-ում գոյություն ունեն բժշկական նշանակության լաբորատոր ազդանյութերի և պարագաների համապատասխանության գնահատման ծառայություններ մատուցող գործող մարմիններ, որոնք իրավասու են տրամադրել բժշկական նշանակության լաբորատոր ազդանյութերի և պարագաների խմբաքանակի որակը հավաստող փաստաթուղթ, և եթե այո, ապա խնդրել ենք նաև նշել այդ մարմինների անվանումը: Ստացված պատասխանի համաձայն, մեջբերում եմ. <<<<-ում բացակայում են հավատարմագրված համապատասխանության գնահատման մարմիններ, որոնք իրենց հավատարմագրման ոլորտում ունեն բժշկական նշանակության լաբորատոր ազդանյութեր>> (նամակը կցվում է):

Այստեղից հետևում է, որ <<ԳԲԲԱ-ԼՕ-2022-27>> բողոքի քննարկման նիստի ժամանակ << պաշտպանության նախարարության ներկայացուցիչների կողմից <<<< ՊՆ-

ԳՀԱՊՁԲ-22-9/16>> ծածկագրով մրցույթի հնարավոր մասնակիցներին՝ այդ թվում՝ Մեղէքսպերտ ՍՊԸ-ին, առաջարկվող այլընտրանքային ճանապարհը փանում է փակուղի:

2. Հրավերով սահմանվում է, որ, մեջբերում եմ.

<<Սույն հրավերը կազմվել է գնումների մասին ՀՀ օրենսդրության, այդ թվում՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք), ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ), ՀՀ կառավարության 2017 թվականի ապրիլի 6-ի N 386-Ն որոշմամբ հաստատված «Էլեկտրոնային ձևով գնումների կատարման» կարգի և այլ հրավական ակտերի պահանջներին համապատասխան և նպատակ ունի ՀՀ պաշտպանության նախարարության (այսուհետ՝ պարվիրատու) կողմից հայտարարված ընթացակարգին մասնակցելու մրադրություն ունեցող անձանց (այսուհետ՝ մասնակից) տեղեկացնելու ընթացակարգի պայմանների՝ գնման առարկայի, ընթացակարգի անցկացման, ընտրված մասնակցին որոշելու և նրա հետ պայմանագիր կնքելու մասին, ինչպես նաև օժանդակելու ընթացակարգի հայտը պարզաբանելիս: Հայտեր կարող են ներկայացնել համակարգում գրանցված բոլոր անձիք, անկախ նրանց՝ օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն, քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից:>> մեջբերման ավարտ:

Համաձայն 10 հոկտեմբերի 2019 թվականի N 1422-Ն ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 4-Ի N 526-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 16-Ի N 1454-Ն ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՅՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ 11 կետի՝ 34 կետի 1 և 2 ենթակետերը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

<<1) գնումների մասին հայտարարության և հրավերի կամ նախատրակավորման մասին հայտարարության տեքստերը Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի սահմանած կարգով հրապարակում է տեղեկագրում: Ընդ որում հայտարարության և հրավերի տեքստերը, ինչպես նաև գնահատող հանձնաժողովի նիստերի արձանագրությունները, պայմանագիր կնքելու, կնքված պայմանագրի և ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին հայտարարությունները հրապարակվում են նաև ռուսերեն լեզվով: Ռուսերեն լեզվով հրապարակված նյութերի տարաբնույթ (երկակի) մեկնաբանման հնարավորության դեպքում հիմք է ընդունվում հայերեն տեքստը>>:

Այս պահանջին չհամապատասխանող հրավեր հրապարակելու դեպքում փաստացի սահմանափակվում է համակարգում գրանցված այլ անձանց, օրինակ ոչ ռեզիդենտ կամ Ռուսաստանի Դաշնությունում գրանցված կազմակերպությունների մասնակցությունը ընթացակարգին:

Փաստացի պաշտպանության նախարարությունը միայն հրավերի հայտարարությունն է հրապարակել նաև ռուսերեն լեզվով, իսկ հրավերի տեքստը՝ ներառյալ տեխնիկական բնութագիրը, հավելվածները հրապարակված են միայն հայերեն լեզվով:

Հաշվի առնելով վերոգրյալը կրկին պնդում ենք մեր բողոքը՝ պարտավորեցնել <<<< ՊՆ-ԳՀԱՊՁԲ-22-9/16>> ծածկագրով գնանշման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին չկայացած հայտարարել <<<< ՊՆ-ԳՀԱՊՁԲ-22-9/16>> ծածկագրով գնանշման ընթացակարգը:

Հարկ ենք համարում նաև նշել, որ նույնարվանդակ բազմաթիվ բողոքներ են քննվել ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձանց կողմից, ուստի կմեջբերենք ընդամենը երկու այդպիսի բողոքարկման ընթացակարգ՝ ԳԲՔԱ-ՆԳ-2020/13, ԳԲՔԱ-ԼՕ-2020/28, որոնք երկուսն էլ բավարարվել են:»:

3. ՀՀ պաշտպանության նախարարության կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստարկները, հիմնավորումները և դիրքորոշումը.

Բողոքներ քննող անձը 14.03.2022թ.-ին թիվ /ԲՔԱ-ԼՕ/2/4249-2022 գրությամբ դիմել է ՀՀ պաշտպանության նախարարությանը (այսուհետ նաև՝ Պատվիրատու), հնարավորություն տալով «Մեդէքսպերտ» ՍՊԸ-ի կողմից 11.03.2022թ.-ին ներկայացված բողոքի վերաբերյալ ներկայացնել անհրաժեշտ բոլոր փաստաթղթերի պատճեններն ու Պատվիրատուի գրավոր կարծիքը:

Պատվիրատուն ստանալով գրավոր դիրքորոշում հայտնելու վերաբերյալ գրությունը, ինչպես նաև ծանուցված լինելով նիստերի տեղի, օրվա և ժամի մասին, ներկայացել է հրավիրված նիստերին:

Պատվիրատուն, 17.03.2022թ.-ի թիվ ՊՆ/02/1295-2022 գրությամբ ներկայացված դիրքորոշմամբ, հայտնել է հետևյալը.

««ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-22-9/16» ծածկագրով ընթացակարգի շրջանակում «Մեդէքսպերտ» ՍՊ ընկերության կողմից 11.03.2022թ.-ին ներկայացված թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2022/27 բողոքի վերաբերյալ ներկայացնում են Պատվիրատուի դիրքորոշումը.

1. Բողոքաբեր ընկերության այն պնդումը, որ «մրցույթի հրավերի տեխնիկական բնութագրի ծանոթություն բաժնում սահմանված «1.Ապրանքները պետք է ունենան. 1.2 Եվրամիության և/կամ ԵԱՏՄ երկրներից որևէ մեկում և/կամ ԱՄՆ-ում և/կամ Ճապոնիայում ապրանքների գրանցման հավաստագիր: Բացառություն են կազմում ՀՀ-ում արտադրված ապրանքները:» պահանջը խոչընդոտում է ԵԱՏՄ երկրներում գրանցված ապրանքներ առաջարկող ընկերությունների մասնակցությունը սույն ընթացակարգին, քանի որ ԵԱՏՄ գրանցված ապրանքների համար տրվում է գրանցման վկայական, այլ ոչ թե հավաստագիր:» չի համապատասխանում իրականությանը: Հայտնում են, որ Պատվիրատուի համար էական է առաջարկվող ապրանքատեսակների նշված երկրներում գրանցված լինելու փաստը այլ ոչ թե այն փաստաթղթի անունը որը կհավաստի այն: Դրա մասին է վկայում մրցույթի հրավերի տեխնիկական բնութագրի ծանոթություն բաժնում սահմանված 2.2 դրույթը, համաձայն որի՝ «...«1.2» կետում նշված փաստաթղթի պատճենների ներկայացումը՝ CE (Conformité Européenne) կամ FDA (Food and Drug Administration) կամ EAC (Eurasian Conformity) կամ EACMed (Eurasian Conformity medical) մակնշում ունեցող ապրանքների համար պարտադիր չէ:»:

Նշեմ նաև որ, հայերեն «հավաստագիր» բառի հոմանիշը՝ համաձայն bararanonline.com կայքի, հենց առաջին մեկնաբանմամբ հանդիսանում է «վկայական» բառը: Բացի այդ գրանցման փաստաթղթերի նշված անունների վերաբերյալ կասկած ունենալու դեպքում մասնակիցը կարող էր օրենքով սահմանված կարգով պատվիրատուից պարզաբանում պահանջել: Մասնակիցը հրապարակված ընթացակարգերի շրջանակներում օգտվել է այդ իրավունքից և պահանջել պարզաբանում նշված դրույթի վերաբերյալ, սակայն իրեն հետաքրքրել է ոչ թե փաստաթղթի անվանումը այլ այն, թե ինչ տեղեկատվություն պետք է պարունակի դրույթով սահմանված երկրներում ապրանքի կոնկրետ «գրանցման հավաստագիր» փաստաթուղթը: Սահմանված կարգով մասնակցին պարզաբանվել է, որ «պահանջվող փաստաթուղթը առնվազն պետք է պարունակի տեղեկատվություն հավաստագրող կազմակերպության, արտադրող կազմակերպության, ապրանքի կամ ապրանքատեսակի և փաստաթղթի համարի (գրանցման համարի) վերաբերյալ»:

Ելնելով վերոգրյալից գտնում ենք, որ նշված բառերի սխալ մեկնաբանությունը բողոքաբերի կողմից հիմնավոր չէ, քանի որ նախ՝ վկայական և հավաստագիր բառերը հոմանիշներ են, հետևաբար պատվիրատուն չէր կարող մերժել ապրանքի ընդունումը՝ պարզաբանմամբ հստակեցված տեղեկատվությունը պարունակող, ապրանքի գրանցման փաստը վկայող փաստաթուղթ ներկայացնելու դեպքում: Երկրորդ՝ գրանցման

փաստաթղթերի նշված անունների վերաբերյալ կասկած ունենալու դեպքում մասնակիցը կարող էր օրենքով սահմանված կարգով պարզաբանում պահանջել: Այսինքն, մեր կարծիքով բողոքաբերը այս «բառախաղերով» փորձում է խոչընդոտել գնման ընթացակարգերի անցկացումը և հասնել ապրանքների գրանցման պահանջի վերացման:

2. Բողոքաբեր ընկերության այն պնդումը, որ «մրցույթի հրավերի տեխնիկական բնութագրի ծանոթություն բաժնում սահմանված 2.1 դրույթը՝ համաձայն որի «Պայմանագրի կատարման փուլում մատակարարը ապրանքի մատակարարված խմբաքանակի հետ պետք է ներկայացնի խմբաքանակն ուղեկցող որակը հավաստող փաստաթուղթ՝ փորձարկման արձանագրություն (կամ հավաստագիր), կամ որակի հավաստագիր (կամ անձնագիր), կամ խմբաքանակի հավաստագիր, կամ տվյալ խմբաքանակի որակը հավաստող այլ փաստաթուղթ՝ տրված համապատասխան իրավասու մարմնի կողմից:», խոչընդոտում է մրցակցությունը, քանի որ բացի արտադրող կազմակերպության պաշտոնական ներկայացուցչից որևէ այլ մատակարար, կամ «վերավաճառող», ինչպես նույն է բողոքաբերը, չի կարող ներկայացնել պարզաբանումի կողմից պահանջվող ապրանքների խմբաքանակների վերաբերյալ որակի փաստաթղթեր» ևս չի համապատասխանում իրականությանը քանի որ, վերավաճառող ընկերություններից ապրանքի ձեռքբերման ժամանակ մատակարար ընկերությունը կարող է ապրանքի հետ պահանջել նաև նշված փաստաթղթերը՝ որոնք հասանելի են տվյալ ապրանքը վերավաճառող ընկերության համար, եթե այդ խմբաքանակը ձեռք է բերվել օրինական ճանապարհով արտադրողից կամ նրա պաշտոնական ներկայացուցչից, կամ այլ վերավաճառող ընկերությունից:

Ելնելով վերոգրյալից գտնում ենք, որ ապրանքի որակը հավաստող փաստաթղթի պահանջ դնելով պարզաբանում չի առաջացնում մրցակցության համար «չհիմնավորված խոչընդոտ» և չի խախտում «Գնումների մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ կետի 2-րդ ենթակետի պահանջները:

3. Բողոքաբեր ընկերության այն պնդումը, որ «մրցույթի հրավերի տեխնիկական բնութագրի ծանոթություն բաժնում 2.4 դրույթով սահմանված պահանջը՝ համաձայն որի «Մատակարարված ապրանքի մակնշման մեջ կամ ուղեկցող փաստաթղթերում առկա տեղեկատվության հիման վրա պիտանելիության ժամկետի 1/2-ի առկայության («1.3» կետի) համապատասխանությունը որոշելու անհնարիության դեպքում՝ մատակարարը մատակարարված ապրանքի խմբաքանակի հետ պետք է ներկայացնի մատակարարված ապրանքների պիտանելիության ժամկետի 1/2—ի առկայության («1.3» կետին)

համապատասխանությունը հավաստող փաստաթուղթ՝ տրված արտադրողի կամ նրա պաշտոնական ներկայացուցչի կողմից:», խտրական է ևս չի համապատասխանում իրականությանը: Ինչպես երևում է սահմանված դրույթից Պատվիրատուն ապրանքի պիտանելիության ժամկետի վերաբերյալ փաստաթուղթ պահանջում է այն դեպքում երբ մատակարարված ապրանքի մակնշման մեջ կամ ուղեկցող փաստաթղթերում առկա տեղեկատվությունը հնարավորություն չի տալիս որոշելու մատակարարված ապրանքի մնացորդային պիտանելիության ժամկետի համապատասխանությունը պայմանագրի պահանջներին: Արտադրողի, կամ նրա պաշտոնական ներկայացուցչի կողմից տրամադրված փաստաթղթի պահանջը հիմնավորվում է նրանով, որ հենց արտադրողն է տիրապետում այն տեղեկատվությանը թե երբ է արտադրվել տվյալ ապրանքը և ինքն է սահմանում պիտանելիության ժամկետը: Մատակարարված ապրանքի պիտանելիության ժամկետի որոշման համար կարող է հիմք հանդիսանալ մատակարարված ապրանքի գործարանային փաթեթավորման մեջ առկա ձեռնարկում նշված տեղեկատվությունը: Ինչ վերաբերվում է բաց աղբյուրներից տվյալ մոդելի ապրանքի պիտանելիության ժամկետի վերաբերյալ փաստաթղթերին, ապա դրանք ընդունելի չեն այն պարզ պատճառով, որ անհայտ է թե այդ փաստաթղթի հրատարակումից հետո արտադրողը կատարել է պիտանելիության ժամկետների փոփոխություն թե ոչ: Բացի այդ գտնում ենք որ վերավաճառող ընկերություններից ապրանքի ձեռքբերման ժամանակ մատակարարին ևս պետք է հետաքրքրի ձեռքբերվող խմբաքանակի պիտանելիության ժամկետը:

4. Բողոքաբեր ընկերության այն պնդումը, որ «զնման ժամանակացույցի «մատակարարման ժամկետ» սյունակներից առաջինով սահմանված «2-րդ եռամսյակ» -ը նշանակում է, որ պատվիրատուն կարող է պահանջել ապրանքների մատակարարում սկսած ապրիլի մեկից, ինչն անիրագործելի է...» և դրա մեկնաբանությունը չի համապատասխանում իրականությանը, անհիմն է և անհեթեթ: Գնման ժամանակացույցով սահմանված է ապրանքների մատակարարման ժամանակաշրջան՝ ըստ եռամսյակների: Սահմանված ժամանակացույցում չկա որևէ նշում որ ապրանքը պետք է մատակարարվի ըստ պատվիրատուի պահանջի կամ հայտի, ուստի մատակարարն ինքն է ընտրում թե սահմանված ժամանակաշրջանի ընթացքում կոնկրետ որ օրն է իրականացնում մատակարարումը, բացառությամբ՝ ոչ աշխատանքային օրերի:

Հետևաբար ժամանակացույցում երկրորդ եռամսյակ սահմանված լինելու դեպքում մատակարարը կարող է ապրանքը մատակարարել մինչև հունիսի 30-ը ընկած ժամանակահատվածում իրեն հարմար ցանկացած աշխատանքային օր: Մատակարարման

ժամկետների վերաբերյալ կասկածներ ունենալու դեպքում մասնակիցը կարող էր օրենքով սահմանված կարգով պատվիրոտուից պարզաբանում պահանջել, ինչը չի արվել:

5. Բողոքաբեր ընկերության կողմից՝ ընթացակարգի շրջանակներում հարցմանն ի պատասխան մեր կողմից տրված պարզաբանմանների, մեկնաբանությունները չեն համապատասխանում իրականությանը, անընդունելի են և խեղաթյուրված: Մասնավորապես՝

ա.«4. Ծանոթություն բաժնի 2.1 կետում գրված «կամ տվյալ խմբաքանակի որակը հավաստող այլ փաստաթուղթ՝ տրված համապատասխան իրավասու մարմնի կողմից» պահանջում ուլքեր են համարվելու իրավասու մարմիններ, մասնավորապես արդյոք Ձեր կողմից իրավասու մարմին է դիտվելու տվյալ ապրանքի վերավաճառքով զբաղվող ընկերությունը: Եթե ոչ ապա առաջարկում եմ թվարկել, թե ուլքեր են Ձեր համար դիտարկվելու որպես իրավասու մարմիններ, ուլքեր ըստ Ձեզ իրավասու են տրամադրել տվյալ խմբաքանակի որակը հավաստող փաստաթուղթ:» հարցի վերաբերյալ մասնակցին տրամադրված պատասխանում նշված է եղել, որ «4 կետ. Իրավասու մարմին է համարվում այն մարմինը, որը օժտված է տվյալ փաստաթուղթը կազմելու և տրամադրելու իրավունքով: Օրինակ՝ փորձարկման արձանագրություն իրավասու է տրամադրել համապատասխան փորձաքննություն իրականացնող մարմինը, իսկ համապատասխանության հավաստագիր իրասվասու է տրամադրել հավաստագրող մարմինը: Վերավաճառք իրականացնող կազմակերպությունը կարող է դիտարկվել որպես իրավասու մարմին, եթե այն Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան՝ արտադրողի կողմից ստացել է իր անունից գործելու և սահմանված պարտավորությունների շրջանակներում խնդիրները լուծելու գրավոր թույլտվություն և գործում է ստացված իրավասությունների շրջանակներում:», ինչը չի նշանակում որ ընդունելի են միայն արտադրողի կամ նրա պաշտոնական ներկայացուցչի կողմից տրամադրված փաստաթղթերը: Պատասխանում բերված օրինակներից և ոչ մեկում նշված չէ որ այն պետք է տրամադրված լինի արտադրողի կամ նրա պաշտոնական ներկայացուցչի կողմից: Բացի այդ ակնհայտ է, որ որևէ փաստաթուղթ տրամադրելու համար այդ փաստաթուղթը տրամադրող մարմինը պետք է ունենա համապատասխան իրավասություն, ցանկացած փաստաթուղթ տրամադրող մարմինը իրավասու է տրամադրել միայն այնպիսի փաստաթուղթ որի տրամադրման իրավասությամբ ինքն օժտված է և չկա այնպիսի մարմին որն օժտված լինի ցանկացած փաստաթուղթ տրամադրելու իրավասությամբ:

բ. «5. Ծանոթություն բաժնի 2.1 կետում գրված «կամ տվյալ խմբաքանակի որակը հավաստող այլ փաստաթուղթ՝ տրված համապատասխան իրավասու մարմնի կողմից» պահանջում ինչ «այլ» փաստաթղթի մասին է խոսքը, մասնավորապես արտադրողի կողմից տրված հայտարարագիրը համարվում է այդպիսի փաստաթուղթ:» հարցի վերաբերյալ մասնակցին տրամադրված պատասխանում նշված է եղել, որ «5 կետ. 2.1 կետում նշված «կամ տվյալ խմբաքանակի որակը հավաստող այլ փաստաթուղթ՝ տրված համապատասխան իրավասու մարմնի կողմից» պահանջում «այլ փաստաթուղթը» նշանակում է, որ հանձնման պահին կարող է ներկայացվել «Հրավերի» 2.1 կետում թվարկված փաստաթղթերի փոխարեն ցանկացած այլ փաստաթուղթ, որը կհավաստի մատակարարված ապրանքի խմբաքանակի որակը և տրված կլինի իրավասու մարմնի կողմից: Արտադրողի կողմից տրված հայտարարագիրը կարող է համարվել այդպիսի փաստաթուղթ եթե տրված կլինի մատակարարված խմբաքանակի համար:», ինչը նշանակում է, որ մատակարարը ապրանքի մատակարարված խմբաքանակի հետ կարող է ներկայացնել այդ խմբաքանակի որակը հավաստող ցանկացած փաստաթուղթ՝ տրված այդ փաստաթուղթը տրամադրելու իրավասություն ունեցող մարմնի կողմից՝ անկախ փաստաթղթի տեսակից և տրամադրող մարմնից:

գ. «6. Ծանոթություն բաժնի 2.4 կետում գրված «Մատակարարված ապրանքի մակնշման մեջ կամ ուղեկցող փաստաթղթերում առկա տեղեկատվության հիման վրա «1.3» կետի համապատասխանությունը որոշելու անհնարինության դեպքում՝ մատակարարված ապրանքների «1.3» կետին համապատասխանությունը հավաստող փաստաթուղթ՝ տրված արտադրողի կամ նրա պաշտոնական ներկայացուցչի կողմից:» պահանջում կոնկրետ ինչ ուղեկցող փաստաթղթերի մասին է խոսքը գնում:» հարցի վերաբերյալ մասնակցին տրամադրված պատասխանում նշված է եղել, որ «6. կետի առնչությամբ հայտնում են, որ ուղեկցող փաստաթղթեր համարվում են. Մատակարարված ապրանքի հետ ներկայացված՝ «Հրավերի» ծանոթություն բաժնի 2.1 կետում նշված փաստաթղթերը կամ մատակարարված ապրանքի գործարանային փաթեթավորման մեջ առկա օգտագործման ձեռնարկը:», ինչը չի նշանակում, որ գործարանային փաթեթավորման մեջ առկա օգտագործման ձեռնարկը մեր կողմից դիտվում է որպես մատակարարված խմբաքանակի որակը հավաստող փաստաթղթերի այլընտրանք: Դա նշանակում է, որ մատակարարված ապրանքի գործարանային փաթեթավորման մեջ առկա և, հետևաբար, հենց այդ փաթեթավորման մեջ եղած ապրանքին վերաբերվող օգտագործման ձեռնարկում պիտանելիության ժամկետի վերաբերյալ առկա տեղեկատվությունը ևս կարող է հիմք հանդիսանալ մատակարարված

ապրանքի մնացորդային պիտանելիության ժամկետի՝ պայմանագրի պահանջներին համապատասխանությունը որոշելու համար:

դ. Հրապարակված հրավերում և տրված պարզաբանումներում չկա սահմանված պահանջ որ գործարանային փաթեթավորման մեջ պեպք է պարտադիր առկա լինի օգտագործման ձեռնարկ, ցանկացած արտադրող ինքն է որոշում գործարանային փաթեթավորման մեջ իր արտադրած ապրանքի հետ օգտագործման ձեռնարկի առկայությունը: Փաթեթավորման մեջ ձեռնարկի առկայության դեպքում դրանում զետեղված տեղակալությունը միանշանակ վերաբերվում է տվյալ ապրանքին, իսկ բաց աղբյուրներում առկա ձեռնարկները չի բացառվում որ ժամանակի ընթացքում արտադրողի կողմից ենթարկված լինեն փոփոխության և արդեն իսկ լինեն ոչ կիրառելի:

Ամփոփելով վերոգրյալը գտնում ենք, որ բողոքում առկա փաստացի և իրավական հիմքերը չեն համապատասխանում իրականությանը և որ սահմանված դրույթները չեն հակասում օրենսդրության պահանջներին:»:

Պատվիրատուն, 24.03.2022թ.-ի թիվ ՊՆ/02/1431-2022 գրությամբ ներկայացված լրացուցիչ դիրքորոշմամբ, հայտնել է հետևյալը.

««ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-22-9/16» ծածկագրով ընթացակարգի շրջանակում «Մեդէքսպերտ» ՍՊ ընկերության կողմից բողոքի մասով ՀՀ ՊՆ դիրքորոշման վերաբերյալ ներկայացնում եմ Պատվիրատուի դիրքորոշումը.

1. Բողոքաբեր ընկերության կողմից հիշատակված 04.05.2017թ. ՀՀ Կառավարության 526-Ն որոշմամբ հաստատված «ԿԱՐԳԻ» 21-րդ կետի 1-ին ենթակետի ա. պարբերությունով սահմանված՝ «պայմանագրի կատարման փուլում ապրանքն արտադրողից կամ վերջինիս ներկայացուցչից երաշխիքային նամակի կամ համապատասխանության սերտիֆիկատի ներկայացման անհրաժեշտությունը, եթե դրանք կիրառելի են տվյալ ապրանքի համար:» դրույթում սահմանված է, որ նշված փաստաթղթերը պեպք է ներկայացվեն ապրանքն արտադրողից կամ վերջինիս ներկայացուցչից: Վերոգրյալից ակնհայտ է, որ ապրանքատեսակների համապատասխանության և որակի երաշխավորը արտադրողն է:

Տվյալ դեպքում «մրցույթի հրավերի տեխնիկական բնութագրի ծանոթություն բաժնում սահմանված 2.1 դրույթը՝ համաձայն որի «Պայմանագրի կատարման փուլում մատակարարը ապրանքի մատակարարված խմբաքանակի հետ պեպք է ներկայացնի խմբաքանակն ուղեկցող որակը հավաստող փաստաթուղթ՝ փորձարկման արձանագրություն (կամ հավաստագիր), կամ որակի հավաստագիր (կամ անձնագիր), կամ

խմբաքանակի հավաստագիր, կամ տվյալ խմբաքանակի որակը հավաստող այլ փաստաթուղթ՝ տրված համապատասխան իրավասու մարմնի կողմից:», չի արգելում որևէ մատակարարի պայմանագրի կատարման փուլում, որպես ապրանքի մատակարարված խմբաքանակն ուղեկցող որակը հավաստող փաստաթուղթ ներկայացնել արտադրողի կամ նրա ներկայացուցչի կողմից տրված երաշխիքային նամակ, քանի որ արտադրողը հանդիսանում է իրավասու մարմին իր արտադրանքի խմբաքանակի որակը երաշխիքային նամակով երաշխավորելու համար: Բողոքաբերի կողմից «ԿԱՐԳԻ» վերոհիշյալ դրույթի հիշատակումը առնվազն անհասկանալի է, քանի որ ընկերությունը ամեն կերպ փորձում է պայքարել ապրանքն արտադրողից կամ նրա պաշտոնական ներկայացուցչից որևէ փաստաթուղթ պահանջելու դեմ՝ մեկնաբանելով, որ վերավաճառող կազմակերպությունները նման փաստաթղթեր չեն տրամադրում: Բացի այդ, գտնում ենք, որ 04.05.2017թ. ՀՀ Կառավարության 526-Ն որոշմամբ հաստատված «ԿԱՐԳԻ» 21-րդ կետի 1-ին ենթակետը չի սահմանափակում մատակարարվող ապրանքի որակը հավաստող այլ փաստաթղթերի մասով պատվիրատուի կողմից պահանջի իրավունքը, հակառակ դեպքում կստացվեր, որ ՀՀ կառավարության 2 մայիսի 2013թ. N-502-Ն որոշումը հակասում է 04.05.2017թ. ՀՀ Կառավարության 526-Ն որոշմամբ հաստատված «ԿԱՐԳԻՆ», քանի որ սահմանում է այնպիսի որակը հավաստող փաստաթղթերի ներկայացման պահանջ, որոնք նշված չեն «ԿԱՐԳՈՒՄ»:

Թյուր կարծիք ձևավորելու նպատակով բողոքաբերը իր բողոքնում և դիրքորոշման մեջ հրավերով սահմանված վերոնշյալ դրույթը մեկնաբանելիս նշում է, որ պատվիրատուն պահանջում է միայն արտադրողի կողմից տրամադրված փաստաթղթեր: Մինչդեռ տրամադրված պարզաբանմամբ հստակ նշվել է, որ խմբաքանակի որակը հավաստող փաստաթուղթ տրամադրող՝ Իրավասու մարմին է համարվում այն մարմինը, որը օժտված է տվյալ փաստաթուղթը կազմելու և տրամադրելու իրավունքով: Օրինակ՝ փորձարկման արձանագրություն իրավասու է տրամադրել համապատասխան փորձաքննություն իրականացնող մարմինը, իսկ համապատասխանության հավաստագիր իրավասու է տրամադրել հավաստագրող մարմինը: Վերավաճառք իրականացնող կազմակերպությունը կարող է դիտարկվել որպես իրավասու մարմին, եթե այն Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան՝ արտադրողի կողմից ստացել է իր անունից գործելու և սահմանված պարտավորությունների շրջանակներում խնդիրները լուծելու գրավոր թույլտվություն և գործում է ստացված իրավասությունների շրջանակներում:

Բողոքաբերի կողմից մեր դիրքորոշման 1-ի կետի վերաբերյալ դիտարկումներում ներկայացված այն կարծիքը, որ պատվիրատուի համար կարևորը հենց փաստաթղթի անվանումն է և որպես հիմնավորում ներկայացված դրվագը իրականությանը չեն համապատասխանում: 26.11.2021թ-ին «Վերիտաս» ՍՊ ընկերության հետ կնքված ԳՀԱՊՁԲ-21-9/43-9 պայմանագրի շրջանակներում 20.12.2021թ-ին ընդունող հանձնաժողովին շուրջ 14 փարբեր խմբաքանակներով մատակարարված թվով 55 հատ «Հարմոնիկ ուլտրաձայնային ծայրադիր 5մմ-23սմ, արճանակատիպ» ապրանքատեսակի հետ ներկայացրել էր ապրանքն արտադրողի՝ «Ջոնսոն և Ջոնսոն» ընկերության ՌԴ-ում ներկայացուցչի կողմից «Հայտարարագիր», որն ընդունվել էր ՌԴ-ում հայտարարագրում նշված փորձարկումների հիման վրա: Մատակարարված ապրանքատեսակի խմբաքանակները ձեռք չէին բերվել ներկայացված հայտարարագրի իրավափորձից: Ներկայացված հայտարարագրի հետ չկային դրա ընդունման համար հիմք հանդիսացած փորձարկման արձանագրությունները, որոնցում նշված պեպք է լինեին փորձարկված խմբաքանակների համարները, և որով հնարավոր կլիներ իդենտիֆիկացնել ներկայացված հայտարարագրի վերաբերելիությունը մատակարարված խմբաքանակներին: Միաժամանակ մատակարարված ապրանքատեսակի ընդունման գործընթացի ժամանակ արձանագրվել էր, որ պիտակավորման վրա առկա է միայն պիտանելիության ժամկետի ավարտի մասին տեղեկատվություն, իսկ ներկայացված որևէ փաստաթղթում չկա տվյալ մատակարարված ապրանքատեսակների արտադրության ժամկետների վերաբերյալ՝ ինչն անհնարին էր դարձնում մատակարարված ապրանքատեսակի մնացորդային պիտանելիության ժամկետի պայմանագրով սահմանված պահանջներին համապատասխանության որոշումը: Պիտանելիության ժամկետի համապատասխանությունը մատակարար ընկերությունը առաջարկել էր որոշել հիմնվելով անհայտ աղբյուրից վերցված օգտագործման ձեռնարկի պատճեի սկանավորված փարբերակում առկա տեղեկատվության հիման վրա՝ որում նշված էր «Гарантийный срок хранения – изготовитель гарантирует сохранение стерильности изделия, а также его пригодность для использования, при условии его правильного транспортирования и хранения в течение 5 лет с даты производства.»: Ընդ որում նշված էր նաև, որ «В коробку с инструментом входит инструкция по применению» և «Содержимое картонной упаковки (коробки) – Инструмент, 6 шт.»: Ներկայացված ձեռնարկը չէր կարող հիմք համարվել, քանի որ նրանում առկա տեղեկատվությունը չէր համընկնում մատակարարված ապրանքի հետ:

Վերը նշված պայմանագրով Պապասխանապու ստորաբաժանում հանդիսացող ռազմաբժշկական վարչության կողմից ներկայացված համաձայնագրի մատակարարված ապրանքին վերաբերելիության հարցը հստակեցնելու նպատակով՝ հարցում էր արվել «հայտարարագրի» իրավափորձը՝ ՌԴ-ում «Ջոնսոն և Ջոնսոն» ընկերության ներկայացուցչությանը: Ի պապասխան ստացված նամակով ներկայացված հայտարարագրի իրավաբերը հայտնել էր որ, «Վերիպաս» ՍՊ ընկերության կողմից մատակարարված ապրանքատեսակի խմբաքանակները չեն անցել՝ ՌԴ-մատակարարում իրականացնող, ընկերության պահեստով (հետևաբար չէին կարող ընդգրկված լինել փորձարկված խմբաքանակներում), ինչպես նաև հայտնել էր, որ հաշվի առնելով մատակարարված խմբաքանակների գործարանային տրանսպորտային փաթեթավորման խախտման հանգամանքը՝ ընկերությունը չի երաշխավորում մատակարարված ապրանքատեսակի խմբաքանակների որակը և անվտանգությունը: Վերոգրյալից ակնհայտ է որ ներկայացված հավաստագիրը չէր վերաբերվում մատակարարված ապրանքին, ընդ որում մատակարար ընկերությունը հրաժարվում էր այլ փաստաթուղթ ներկայացնել: Արդյունքում ընդունող հանձնաժողովը արձանագրել է անհամապատասխանությունները և կայացրել որոշում՝ մատակարարված ապրանքի ընդունումը մերժելու վերաբերյալ:

Ամփոփելով վերոգրյալը ակնհայտ է, որ մատակարարված ապրանքի ընդունումը մերժվել է ոչ թե ներկայացված փաստաթղթի անվան պատճառով, այլ ներկայացված փաստաթուղթը մատակարարված ապրանքին չվերաբերվելու և պիտանելիության ժամկետի պայմանագրի պահանջներին համապատասխանությունը որոշելու անհնարինության պատճառով:

Անընդունելի ենք համարում բողոքաբերի հղումը ՀՀ էկոնոմիկայի նախարարի 2019թ. հունիսի 21-ի N 425-Ն հրամանին: Եթե բողոքաբերը՝ իր կողմից մեջբերված, հրամանը ուսումնասիրել ամբողջությամբ և ուշադիր, ապա կտեսներ, որ նշված հրամանը ոչ մի առնչություն չունի բժշկական նշանակության ապրանքատեսակների և դեղորայքի հետ: Հրամանի հավելված 2-ի 20-րդ կետի 3-րդ ենթակետի 5-րդ մասում հստակ թվարկված են այն 19 խումբ ապրանքատեսակները, որոնց գրանցումը կանոնակարգվում է այդ հրամանով և այդ խմբերի մեջ ներառված չեն բժշկական նշանակության ապրանքատեսակները: Բժշկական նշանակության ապրանքատեսակները և դեղամիջոցները, այդ խմբերում ներառված չլինելը պայմանավորված է նրանով, որ ինչպես արդեն նշել ենք բժշկական արտադրատեսակների շրջանառությունը կանոնակարգվում է բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին ՀՀ Օրենքով, և այդ ոլորտի

լիազոր մարմինն է ՀՀ առողջապահության նախարարությունը այլ ոչ թե էկոնոմիկայի նախարարությունը:

Բողոքաբեր ընկերության պնդումը, որ մեր կողմից հղում է արվում ուժը կորցրած փաստաթղթի, իրականությանը չի համապատասխանում: Նշվածն ապացուցվում է նրանով, որ Arlis.am պաշտոնական տեղեկագրում առկա են «Եվրասիական տնտեսական միության շրջանակներում բժշկական արտադրատեսակների (բժշկական նշանակության արտադրատեսակների և բժշկական տեխնիկայի) շրջանառության միասնական սկզբունքների և կանոնների մասին ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ», «Բժշկական արտադրատեսակների գրանցման և անվտանգության, որակի և արդյունավետության փորձաքննության կանոնների մասին Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի ՈՐՈՇՄԱՆ», ինչպես նաև «Եվրասիական տնտեսական միության շրջանակներում դեղամիջոցների շրջանառության միասնական սկզբունքների և կանոնների մասին ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ»՝ գործող, թե հայերեն և թե ռուսերեն փարբերակները: Նշված փաստաթղթերի ռուսերեն փարբերակների՝ բոլոր այն դրույթների՝ որոնցում առկա է, «регистрационное удостоверение» բառակապակցությունը, հայերեն փարբերակների համապատասխան դրույթներում նշված է «գրանցման հավաստագիր» բառակապակցությունը: Ուստի՝ «регистрационное удостоверение» անվանմամբ փաստաթուղթը դա հենց նույն «գրանցման հավաստագիրն է» այլ թչ թե «գրանցման վկայականը»:

Անընդունելի ենք համարում բողոքաբեր ընկերության՝ իրականությանը չհամապատասխանող այն պնդումը, որ 24.12.2021թ-ին կայացած Եվրասիական տնտեսական հանձնաժողովի նիստի ընթացքում «Համաձայնագիր»-ը ենթարկվել է փոփոխության՝ ինչի արդյունքում «...բացակայում է գրանցման «ՀԱՎԱՍՏԱԳԻՐ» տերմինը և դրա փոխարեն գրված է գրանցման «ՎԿԱՅԱԿԱՆ», ինչը բողոքաբերը հիմնավորում է հղումներ անելով Եվրասիական տնտեսական հանձնաժողովի պաշտոնական կայքէջի «ՆՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ» համապատասխանաբար հայերեն և ռուսերեն բաժիններում հրապարակված տեղեկատվությանը, որոնք իմիջիայլոց իմաստով մոտ են, բայց նույնը չեն՝ թարգմանության ոչ ճիշտ լինելու պատճառով: Նշված տեղեկատվությունը չունի իրավական կարգավիճակ, շարադրված է ազատ ոճով որպես նորություններ:

Փաստն այն է, որ իրականացված փոփոխությունը չի անդրադարձել այն դրույթներին, որոնցում առկա են «գրանցման հավաստագիր» կամ «регистрационное удостоверение» բառակապակցությունները: Եվրասիական տնտեսական միության

պաշտոնական կայքէջի փաստաթղթերի հրապարակման՝ «Իրավական պորտալ» բաժնում հրապարակված 30.12.2021թ. ընդունված «Протокол о внесении изменения в Соглашение о единых принципах и правилах обращения медицинских изделий (изделий медицинского назначения и медицинской техники) в рамках Евразийского экономического союза от 23 декабря 2014 года» արձանագրության 1-ին հոդվածում հստակ նշված է, թե «ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ» որ հոդվածներում են կատարվում փոփոխություններ: Համաձայն այդ արձանագրության՝ փոփոխության է ենթարկվել միայն «ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ» 11-րդ հոդվածը, որը կոչվում է՝ «Հոդված 11. Անցումային ժամանակահատված» կամ «Статья 11. Переходный период»: Հարկանշական է, որ փոփոխված հոդվածի թե հին, և թե նոր խմբագրություններում բացակայում են «գրանցման հավաստագիր» կամ «регистрационное удостоверение» բառակապակցությունները:

Այսպիսով արձանագրում ենք, որ գրանցման հավաստագրերի վերաբերյալ՝ «ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ» առկա, որևէ դրույթ փոփոխության չի ենթարկվել և համաձայնագրի գործող հայերեն տարբերակում գրանցման փաստը հավաստող փաստաթուղթը ձևակերպված է որպես «գրանցման հավաստագիր»:

Մեր՝ բողոքաբեր ընկերության կողմից այսպես կոչված «լավատեսությունը» առ այն, որ վերավաճառող ընկերություններին հասանելի են պահանջված փաստաթղթերը, հիմնավորված է այն փաստով, որ ցանկացած դեպքում ապրանքի սկզբնաղբյուր հանդիսանում է արտադրողը, որը իր արտադրած ապրանքատեսակների հետ տրամադրում է պահանջվող փաստաթղթերը գնորդին և վերավաճառող ընկերությունն էլ պարտավոր է գնորդի պահանջով նշված փաստաթղթերը տրամադրել վաճառվող ապրանքի հետ միասին, իհարկե եթե խոսքը վերաբերում է պատշաճ տնտեսվարողին:

Գնումների մասին ՀՀ Օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի և ՀՀ կառավարության 04,05,2017թ. 526-Ն որոշմամբ հաստատված «ԿԱՐԳԻ» 23-րդ հոդվածի 4-մասի 4-րդ կետի համաձայն՝ Պատվիրատուին սահմանված է իրավունք «բացառիկ իրավունքի» առկայության դեպքում գնումը մեկ անձից իրականացնելու: Տվյալ դեպքում պաշտպանության նախարարությունը՝ որպես պատվիրատու, չի օգտվել իր այդ իրավունքից, քանի որ հրապարակված ընթացակարգի շրջանակներում մասնակցության հայտ կարող են ներկայացնել թե ՀՀ-ում գրանցված ընկերությունները, և թե ՀՀ-ից դուրս գրանցված կազմակերպությունները: Պաշտպանության նախարարությունը չի կարող պիրապետել տեղեկատվության թե արտադրողներից որն է արգելում տարբեր երկրներում

գործող իր դիսպոզիցիոնություններին իրենց փարածաշրջանից դուրս ապրանք վաճառել և, որ արտադրողը նման արգելք չի դնում:

Բողոքաբեր ընկերությունը ինքն է փորձում աղավաղել մեր կողմից ներկայացված դիրքորոշումը: Մենք երբևիցե չենք հայտարարել, որ մեզ չի հետաքրքրում ապրանքի արտադրման ժամկետը: Ընդհակառակը մենք միշտ պնդել ենք, որ մեզ հետաքրքրում է ապրանքի թե արտադրության և, թե պիտանելիության ժամկետները՝ որոնց համադրությամբ մատակարարման պահին հնարավոր կլինի ստուգել մատակարարված ապրանքների մնացորդային պիտանելիության ժամկետի համապատասխանությունը պայմանագրերով սահմանված պահանջներին:

Ընկերությունը աղավաղում է նաև մեր կողմից փրամադրված պարզաբանման պատասխանի բովանդակությունը՝ մեկնաբանելով, որ պաշտպանության նախարարությունը պահանջում է, որ արտադրողի ձեռնարկը պետք է գտնվի հենց գործարանային փաթեթավորման մեջ: Իրականում պաշտպանության նախարարությունը նման պահանջ հրավերով չի սահմանել: Գործարանային փաթեթավորման մեջ առկա ձեռնարկը մեր կողմից հիշատակվել է բողոքաբեր ընկերության՝ պիտանելիության ժամկետին առնչվող, «որոնք են համարվում ուղեկցող փաստաթղթեր» պարզաբանման հարցման պատասխանում, որում նշվել է, որ գործարանային փաթեթավորման մեջ առկա օգտագործման ձեռնարկը ևս կարող է համարվել ուղեկցող փաստաթուղթ՝ մատակարարված ապրանքի պիտանելիության ժամկետի որոշման համար:

Գտնում ենք, որ մնացորդային պիտանելիության ժամկետի սահմանումը պատվիրատուի իրավունքն է, և մատակարար ընկերությունները չէ, որ պետք է որոշեն, թե պատվիրատուն, մասնավորապես պաշտպանության նախարարությունը, ընթացիկ փարում ձեռք բերած ապրանքը պետք է օգտագործի փոխալ փարվա ընթացքում, թե կամ արտակարգ դեպքերի ժամանակ օգտագործման համար կուրակած երկարաժամկետ պահպանման պաշարներում կատարի թարմացումներ՝ նոր մատակարարված ապրանքատեսակներով փոխարինելով անցած փարիներին մատակարարվածները և օգտագործի անցած փարիներին ձեռքբերվածները:

Մատակարարման ժամանակացույցի վերաբերյալ վերահաստատում ենք, որ բողոքաբեր ընկերության այն պնդումը, որ «գնման ժամանակացույցի «մատակարարման ժամկետ» սյունայկներից առաջինով սահմանված «2-րդ եռամսյակ» -ը նշանակում է, որ պատվիրատուն կարող է պահանջել ապրանքների մատակարարում սկսած ապրիլի մեկից, ինչն անհրազործելի է...» և դրա մեկնաբանությունը չի համապատասխանում

իրականությանը, անհիմն է և անհեթեթ: Գնման ժամանակացույցով սահմանված է ապրանքների մատակարարման ժամանակաշրջան՝ ըստ եռամսյակների: Սահմանված ժամանակացույցում չկա որևէ նշում, որ ապրանքը պետք է մատակարարվի ըստ պատվիրատուի պահանջի կամ հայտի, ուստի մատակարարը ինքն է ընտրում թե սահմանված ժամանակաշրջանի ընթացքում կոնկրետ որ օրն է իրականացնելու մատակարարումը, բացառությամբ՝ ոչ աշխատանքային օրերի:

Հետևաբար, ժամանակացույցում երկրորդ եռամսյակ սահմանված լինելու դեպքում, մատակարարը կարող է ապրանքը մատակարարել մինչև հունիսի 30-ը ընկած ժամանակահատվածում իրեն հարմար ցանկացած աշխատանքային օր: Մատակարարման ժամկետների վերաբերյալ կասկածներ ունենալու դեպքում մասնակիցը կարող էր օրենքով սահմանված կարգով պատվիրատուից պարզաբանում պահանջել, ինչը չի արվել: Նախորդ նիստի ժամանակ բողոքաբերին՝ ՊՆ ներկայացուցչի կողմից, առաջարկվել էր ներկայացնել գեթ մեկ օրինակ՝ երբ պաշտպանության նախարարությունը՝ պայմանագրով ամրագրված, մատակարարման ժամկետը եռամսյակով սահմանված լինելու դեպքում, մատակարարից պահանջել է մատակարարել կոնկրետ ամսաթվով և չմատակարարելու դեպքում կիրառվել են պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

Ինչ վերաբերվում է մեր կողմից տրամադրված պատասխանի խեղաթյուրմանը, ապա պարզելու համար, թե իր բողոքի մեջ, խեղաթյուրել է արդյոք բողոքաբեր ընկերությունը մեր կողմից տրամադրված պարզաբանման հարցման պատասխանի բովանդակությունը, անհրաժեշտ է ընդամենը համադրել ընկերության կողմից տրված հարցն ու մեր պատասխանը (և՛ գրավոր, և՛ նախորդ նիստի տեսաձայնագրությունը)՝ մասնավորապես.

Հարց՝ Ծանոթություն բաժնի 2.1 կետում գրված «կամ տվյալ խմբաքանակի որակը հավաստող այլ փաստաթուղթ՝ տրված համապատասխան իրավասու մարմնի կողմից» պահանջում ուլքե՞ր են համարվելու իրավասու մարմիններ, մասնավորապես արդյոք Ձեր կողմից իրավասու մարմին է դիտվելու տվյալ ապրանքի վերավաճառքով զբաղվող ընկերությունը: Եթե ոչ, ապա առաջարկում եմ թվարկել, թե ուլքե՞ր են Ձեր համար դիտարկվելու որպես իրավասու մարմիններ, ուլքե՞ր, ըստ Ձեզ, իրավասու են տրամադրել տվյալ խմբաքանակի որակը հավաստող փաստաթուղթ:

Պատասխան՝ Իրավասու մարմին է համարվում այն մարմինը, որը օժտված է տվյալ փաստաթուղթը կազմելու և տրամադրելու իրավունքով: Օրինակ՝ փորձարկման արձանագրություն իրավասու է տրամադրել համապատասխան փորձաքննություն

իրականացնող մարմինը, իսկ համապատասխանության հավաստագիր իրավասու է տրամադրել հավաստագրող մարմինը: Վերավաճառք իրականացնող կազմակերպությունը կարող է դիտարկվել որպես իրավասու մարմին, եթե այն Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան՝ արտադրողի կողմից ստացել է իր անունից գործելու և սահմանված պարտավորությունների շրջանակներում խնդիրները լուծելու գրավոր թույլտվություն և գործում է ստացված իրավասությունների շրջանակներում:

Հարցի և պատասխանի համադրումից պարզ է դառնում, որ խոսքը գնում է միայն խմբաքանակի որակը հավաստող փաստաթուղթ տրամադրելու իրավասության համատեքստում, և պատասխանում չկա որևէ խոսք վերավաճառող ընկերությունների պարտավորությունների կամ, արդեն իրոնց պատկանող ապրանքատեսակները մեկ ուրիշին վաճառելու համար՝ արտադրողից որևէ թույլտվություն ստանալու անհրաժեշտության մասին: Անհերքելի փաստ է, որ իր արտադրանքի որակի երաշխավորը, նույնիսկ վաճառքից հետո շարունակում է մնալ արտադրողը: Հետևաբար վերավաճառող ընկերությունը արտադրված խմբաքանակի որակը հավաստող փաստաթուղթ կարող է իրեն անունից տրամադրել միայն արտադրողից նման լիազորություններ ունենալու դեպքում:

Պարզաբանումների հարցումների ուղարկման ժամերի մասով ուշագրավ է այն փաստը, որ կոնկրետ այս ընթացակարգի վերաբերյալ բողոքաբեր ընկերությունը հարցումն ուղարկել է մարտի 6-ին ժամը 00:54-ին՝ այսինքն շաբաթից կիրակի ընկած գիշերը: Հարցումը հանձնաժողովը ստացել է հաջորդող աշխատանքային օրվա՝ այն է մարտի 7-ի, առավոտյան և նույն օրը տրամադրել պարզաբանման պատասխան:

«Մեղէքսպերտ» ՍՊ ընկերության դիրքորոշման մեջ «Եվրասիական տնտեսական միության շրջանակներում բժշկական արտադրատեսակների (բժշկական նշանակության արտադրատեսակների և բժշկական տեխնիկայի) շրջանառության միասնական սկզբունքների և կանոնների մասին ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻՆ» հակասում են բողոքաբերի այն պնդումները, որ նշված համաձայնագրում փոփոխության արդյունքում համաձայնագրի կետերում առկա թվով 11 «գրանցման հավաստագիր» արտահայտությունը փոխարինվել է «գրանցման վկայական» արտահայտությունով և, որ մեր կողմից հղում է արվում ուժը կորցրած փաստաթղթի:

«Մեղէքսպերտ» ՍՊ ընկերության դիրքորոշման մեջ «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին ՀՀ Օրենքին» հակասում են բողոքաբերի այն պնդումները:

1-ին հոդվածին և 45-րդ հոդվածի 3-րդ կետին հակասում է այն պնդումը որ գրանցումը իրականացվում է Էլոնոմիկայի նախարարի հրամանով հաստատված կարգով: Այդ պնդումը հակասում է նաև հենց Էլոնոմիկայի նախարարի հրամանին:

45-րդ հոդվածի 12-րդ կետի 4-րդ ենթակետին հակասում է այն կարծիքը, որ մատակարարվող ապրանքատեսակների փաստաթղթերում, փաթեթավորման, պիտակավորման, մակնշման, կիրառման և օգտագործման ձեռնարկներում չհամաձայնեցված փոփոխությունների դեպքում գրանցման կասեցման պարագայում մատակարարները կարող են նման փոփոխություններ իրականացնել:

49-րդ հոդվածի 1-կետին է հակասում այն պնդումը որ ՊՆ ռազմաբժշկական վարչությունը չպետք է իրականացնի որակի կառավարում՝ կիրառվող բժշկական նշանակության ապրանքատեսակների որակի նկատմամբ վերահսկողություն սահմանելով: Բացի այդ 6-րդ հոդվածի՝ Լաբորատոր գործունեություն, 3-րդ կետով հստակ սահմանված է պահանջ՝ «Ին վիտրո» ախտորոշման արտադրատեսակների նկատմամբ իրականացվում է որակի հսկողություն, (տվյալ դեպքում լաբորատոր գործունեությունը իրականացվում է ՊՆ ենթակա կառույցի կողմից), հետևաբար որակը հսկելու համար նախ և առաջ պետք է ընդունել որակյալ, ոչ կեղծ բժշկական արտադրատեսակ, իսկ դրա համար անհրաժեշտ է գործող Օրենքի պահանջներից ելնելով սահմանել ապրանքատեսակների մատակարարվող խմբաքանակների որակը հավաստող փաստաթղթերի ներկայացման պահանջ:

31-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին ենթակետին է հակասում որակի վերահսկման վերաբերյալ պնդումը:

13-րդ հոդվածով սահմանված իրավունքի իրացման է խոչնդդում բողոքաբեր ընկերության որդեգրած քաղաքականությունը:

Վերոնշյալ գործող Օրենքի կիրարկումն ապահովող իրավական ակտերի դեռևս ընդունված չլինելը ամենևին պաշտպանության նախարարությանը չի ազատում իր մասով՝ որպես նշված ապրանքատեսակների ձեռքբերող, պահպանող և սպառող, Օրենքով սահմանված պահանջների իրականացումից:

Ամփոփելով վերոգրյալը գտնում ենք, որ բողոքում առկա փաստացի և իրավական հիմքերը չեն համապատասխանում իրականությանը և որ սահմանված դրույթները չեն հակասում օրենսդրության պահանջներին:»:

4. ԳԲԲԱ-LO-2022/27 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

i. ՀՀ պաշտպանության նախարարության կողմից լաբորատոր ազդանյութերի և պարագաների ձեռքբերման նպատակով 24.01.2022թ.-ին հայտարարվել է «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-22-9/16» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

ii. Ընթացակարգի հրավերի հավելված 6-ով՝ պետության կարիքների համար ապրանքի մատակարարման պայմանագրի հավելված 1-ով՝ տեխնիկական բնութագիր - գնման ժամանակացույցով (այսուհետ նաև՝ Հավելված 1) բացի այլ պայմաններից սահմանվել է, որ ապրանքները պետք է ունենան՝

1.1 Արտադրողին տրված՝ արտադրության անվտանգության և որակի վերահսկման միջազգային հավաստագիր (ISO 13485 և/կամ GMP և/կամ այլ):

1.2 Եվրամիության և/կամ ԵԱՏՄ երկրներից որևէ մեկում և/կամ ԱՄՆ-ում և/կամ Ճապոնիայում ապրանքների գրանցման հավաստագիր: Բացառություն են կազմում ՀՀ-ում արտադրված ապրանքները:

1.3 Պիտանելիության ժամկետ ունեցող ապրանքների դեպքում՝ դրանք հանձնման պահին պետք է ունենան ընդհանուր պիտանելիության ժամկետի առնվազն 1/2-ը:

2. Պայմանագրի կատարման փուլում մատակարարը ապրանքի մատակարարված խմբաքանակի հետ պետք է ներկայացնի.

2.1 Խմբաքանակն ուղեկցող որակը հավաստող փաստաթուղթ՝ փորձարկման արձանագրություն (կամ հավաստագիր) կամ որակի հավաստագիր (կամ անձնագիր) կամ խմբաքանակի հավաստագիր կամ տվյալ խմբաքանակի որակը հավաստող այլ փաստաթուղթ՝ տրված համապատասխան իրավասու մարմնի կողմից:

2.3 «1.1» և «1.2» կետերում նշված փաստաթղթերի պատճենները: «1.2» կետում նշված փաստաթղթի պատճենների ներկայացումը՝ CE (Conformité Européenne) կամ FDA (Food and Drug Administration) կամ EAC (Eurasian Conformity) կամ EACMed (Eurasian Conformity medical) մակնշում ունեցող ապրանքների համար պարտադիր չէ:

2.4 Մատակարարված ապրանքի մակնշման մեջ կամ ուղեկցող փաստաթղթերում առկա տեղեկատվության հիման վրա «1.3» կետի համապատասխանությունը որոշելու անհնարինության դեպքում՝ մատակարարված ապրանքների «1.3» կետին

համապատասխանությունը հավաստող փաստաթուղթ՝ տրված արտադրողի կամ նրա պաշտոնական ներկայացուցչի կողմից:

5. Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

Բողոքներ քննող անձը, լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակացության, որ «Մեդէքսպերտ» ՍՊԸ-ի կողմից 11.03.2022թ.-ին ներկայացված բողոքն անհիմն է և ենթակա մերժման ամբողջությամբ՝ հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 3-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ սույն օրենքի նպատակն է ապահովել գնումների գործընթացում հատուցման դիմաց արժեք, այն է՝

1) պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, և ծառայությունների ձեռքբերում՝ համարժեք հատուցմամբ.

2) գնումների և գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացում:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.

3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն:

Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ունի գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք:

Վերոնշյալ հոդվածների վերլուծության արդյունքում՝ Բողոքներ քննող անձը, փաստում է, որ գնումների օրենսդրությունը, հիմնվելով գնման գործընթացի մրցակցային,

թափանցիկ, համաչափ, հրապարակային, ոչ խտրական, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարության սկզբունքների վրա, նպատակ է հետապնդում ապահովելու գնումների գործընթացում հատուցման դիմաց պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, և ծառայությունների ձեռքբերումը՝ համարժեք հատուցմամբ, և որ ամենակարևորն է՝ գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացման ապահովումը:

Ինչպես նաև Բողոքներ քննող անձը հարկ է համարում հավելել, որ վերոնշյալ սկզբունքների ապահովումն ու իրականացումը գնումների օրենսդրության շրջանակներում իրացնելու համար, անհրաժեշտ պայման է նաև ցանկացած անձի՝ գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք ունենալու սկզբունքը՝ անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից:

Զարգացնելով վերոգրյալները՝ Բողոքներ քննող անձը փաստում է նաև, որ գնման առարկան համարժեք հատուցմամբ ձեռք բերելու նպատակը կլինեք ձևական, եթե դրան հասնելուն ուղղված ընթացակարգերի կազմակերպումը չլինեք տնտեսող, արդյունավետ և օգտավետ:

Այն է՝ ընթացակարգերի կազմակերպումը պետք է լինի՝

1. տնտեսող, այսինքն՝ նախատեսված արդյունքին կամ նպատակին հասնելու համար նախատեսված ռեսուրսների, ֆինանսական միջոցների մինիմալացմամբ՝ պահպանելով նախապես սահմանված որակը.

2. արդյունավետ, այսինքն՝ արդյունքի կամ նպատակի մասով պլանավորված և փաստացի վիճակների համեմատությունը: Նախատեսված արդյունքին կամ նպատակին հասնելու համար օգտագործված նյութական և ոչ նյութական միջոցների համարժեքությունը ձեռք բերված արդյունքին, երբ ապահովվում է կատարված ծախսի և Պատվիրատուի համար դրա օգտակարության միջև պատշաճ հարաբերակցությունը.

3. օգտավետ՝ գնման առարկան համարժեք հատուցմամբ ձեռք բերելու նպատակով դրան հասնելուն ուղղված ընթացակարգերի արդյունքի կամ նպատակի առավելագույն մակարդակի ապահովում:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում հավելել նաև, որ իրավունքի սկզբունքները հիմնարար գաղափարներ են, որոնք արտահայտում են հասարակական կյանքի օբյեկտիվ օրինաչափությունները, ուղղակի կամ անուղղակի ամրագրվում են իրավական նորմերում,

իրավական համակարգի հենասյունն են, կոչված են կարգավորելու հասարակական հարաբերությունները, ունեն համապարտադիրության հատկանիշ:

Օրենքի 13-րդ հոդվածի համաձայն՝

1. Գնման առարկայի բնութագրերը պետք է ամբողջությամբ և հստակ նկարագրեն ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության հատկանիշները, դրանց ձեռքբերման և վճարման պայմանները՝ բացառելով տարակերպ մեկնաբանությունը: Գնման առարկայի բնութագրերը, որոնք ներառում են նաև պայմանագրի գինը, ընդգրկվում են պայմանագրում:

2. Գնման առարկայի բնութագրերը՝

1) պետք է մրցակցության հավասար պայմաններ ապահովեն հնարավոր մասնակիցների համար.

2) չպետք է հանգեցնեն գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացմանը.

3) պետք է լինեն օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք լինեն այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է տվյալ գնումը.

4) ներառում են գնման առարկայի մասնագրի, տեխնիկական տվյալների, իսկ աշխատանքների դեպքում՝ նաև աշխատանքների ծավալաթերթի, ժամանակացույցի և այլ ոչ գնային պայմանների ամբողջական և համարժեք նկարագրությունը:

3. Ելնելով գնման առարկայի առանձնահատկությունից՝ դրանց հատկանիշները հնարավորինս ներառում են ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության որակին, ստանդարտին, անվտանգությանը, պայմանական նշաններին, տերմինաբանությանը, փաթեթավորմանը, բեռնաթափմանը, չափին, նախագծերին, ինչպես նաև գնման առարկայի այլ հատկանիշներին վերաբերող պայմանների հստակ նկարագրությունը՝ հիմնված միջազգային ստանդարտների և Հայաստանի Հանրապետությունում գործող նորմատիվատեխնիկական փաստաթղթերի, ստանդարտների, իսկ դրանց բացակայության դեպքում՝ ժամանակավոր տեխնիկական պայմանների վրա:

4. Գնման առարկայի հատկանիշները կարող են սահմանվել նաև որպես կատարողականի կամ գործառությանի (ֆունկցիոնալ) նկարագրեր, որոնք պետք է ներկայացվեն բավարար ճշտությամբ՝ հնարավորություն տալով մասնակիցներին և պատվիրատուին ճշգրիտ ընկալել պայմանագրի առարկան:

5. Գնման առարկայի հատկանիշները չպետք է պահանջ կամ հղում պարունակեն որևէ առևտրային նշանի, ֆիրմային անվանմանը, արտոնագրին, էսքիզին կամ մոդելին, ծագման երկրին կամ կոնկրետ աղբյուրին կամ արտադրողին, բացառությամբ այն դեպքերի, երբ անհնար է գնման առարկայի բնութագրումն առանց դրանց: Հղումներ օգտագործելու դեպքում հատկանիշների բնութագիրը պետք է պարունակի «կամ համարժեք» բառերը:

ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 21-րդ կետի 1-ին ենթակետի «ա» պարբերության համաձայն՝ եթե գնման գործընթացների կազմակերպման ժամանակացույցով այլ ժամկետ նախատեսված չէ, ապա գնման պահանջի ծագման օրվան հաջորդող քսան աշխատանքային օրվա ընթացքում պատասխանատու ստորաբաժանումը՝ կազմում և հաստատում է գնման հայտը, որը ներառում է գնման առարկայի բնութագրերը: Ապրանքների գնման դեպքում նշվում է նաև մասնակցի կողմից առաջարկվող ապրանքային նշանի, ֆիրմային անվանման, մակնիշի և արտադրողի վերաբերյալ տեղեկատվության ներկայացման անհրաժեշտությունը, իսկ պայմանագրի կատարման փուլում ապրանքն արտադրողից կամ վերջինիս ներկայացուցչից երաշխիքային նամակի կամ համապատասխանության սերտիֆիկատի ներկայացման անհրաժեշտությունը, եթե դրանք կիրառելի են տվյալ ապրանքի համար: Ընդ որում, պայմանագրի կատարման փուլում այն կնքած մասնակցից ծագման երկրի սերտիֆիկատ չի պահանջվում:

Կարգի 22-րդ կետի համաձայն՝ գնման առարկայի բնութագրերը և մասնակիցների որակավորման հատկանիշների գնահատմանը ներկայացվող չափանիշները սահմանելիս պետք է հաշվի առնել, որ դրանց պետք է բավարարեն մեկից ավելի հնարավոր մասնակիցներ...:

Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ Ընթացակարգի հրավերի թիվ 1 հավելվածով՝ տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով սահմանված ցանկացած պահանջ պետք է ապահովի մրցակցության հավասար պայմաններ հնարավոր մասնակիցների համար, օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք լինի այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է տվյալ գնումը:

Տեխնիկական բնութագրով սահմանված այն չափորոշիչների մասով, որոնք պարունակում են հղում ապրանքային նշանին, սահմանված պետք է լինի «կամ համարժեք» արտահայտությունը:

Բողոքներ քննող անձը փաստում է, որ գնումների օրենսդրությունը, հիմնվելով գնման գործընթացի մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային, ոչ խտրական, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարության սկզբունքների վրա, նպատակ է հետապնդում ապահովելու գնումների գործընթացում հատուցման դիմաց պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերումը՝ համարժեք հատուցմամբ, և որ ամենակարևորն է՝ գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացման ապահովումը:

Ինչպես նաև, Բողոքներ քննող անձը հարկ է համարում հավելել, որ վերոնշյալ սկզբունքների ապահովումն ու իրականացումը գնումների օրենսդրության շրջանակներում իրացնելու համար, անհրաժեշտ պայման է նաև ցանկացած անձի՝ գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք ունենալու սկզբունքը՝ անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից:

Բողոքներ քննող անձը փաստում է նաև, որ Ընթացակարգի գնման առարկայի բնութագրերն ամբողջությամբ և հստակ պետք է նկարագրեն ձեռքբերվող ապրանքի հատկանիշները՝ բացառելով տարակերպ մեկնաբանությունը, հնարավոր մասնակիցների համար պետք է ապահովեն մրցակցության հավասար պայմաններ, դրանով իսկ բացառելով գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացումը: Ինչպես նաև բնութագիրն օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք պետք է լինի այն կարիքին, որի բավարարման նպատակով հայտարարվել է Ընթացակարգը:

Սույն գործի փաստերի համաձայն՝ ՀՀ պաշտպանության նախարարության կողմից լաբորատոր ազդանյութերի և պարագաների ձեռքբերման նպատակով 24.01.2022թ.-ին հայտարարված «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-22-9/16» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերի հավելված 6-ով՝ պետության կարիքների համար ապրանքի մատակարարման պայմանագրի հավելված 1-ով՝ տեխնիկական բնութագիր - գնման ժամանակացույցով սահմանվել է, որ ապրանքները պետք է ունենան՝

1.1 Արտադրողին տրված՝ արտադրության անվտանգության և որակի վերահսկման միջազգային հավաստագիր (ISO 13485 և/կամ GMP և/կամ այլ):

1.2 Եվրամիության և/կամ ԵԱՏՄ երկրներից որևէ մեկում և/կամ ԱՄՆ-ում և/կամ Ճապոնիայում ապրանքների գրանցման հավաստագիր: Բացառություն են կազմում ՀՀ-ում արտադրված ապրանքները:

1.3 Պիտանելիության ժամկետ ունեցող ապրանքների դեպքում՝ դրանք հանձնման պահին պետք է ունենան ընդհանուր պիտանելիության ժամկետի առնվազն 1/2-ը:

2. Պայմանագրի կատարման փուլում մատակարարը ապրանքի մատակարարված խմբաքանակի հետ պետք է ներկայացնի.

2.1 Խմբաքանակն ուղեկցող որակը հավաստող փաստաթուղթ՝ փորձարկման արձանագրություն (կամ հավաստագիր) կամ որակի հավաստագիր (կամ անձնագիր) կամ խմբաքանակի հավաստագիր կամ տվյալ խմբաքանակի որակը հավաստող այլ փաստաթուղթ՝ տրված համապատասխան իրավասու մարմնի կողմից:

2.3 «1.1» և «1.2» կետերում նշված փաստաթղթերի պատճենները: «1.2» կետում նշված փաստաթղթի պատճենների ներկայացումը՝ CE (Conformité Européenne) կամ FDA (Food and Drug Administration) կամ EAC (Eurasian Conformity) կամ EACMed (Eurasian Conformity medical) մակնշում ունեցող ապրանքների համար պարտադիր չէ:

2.4 Մատակարարված ապրանքի մակնշման մեջ կամ ուղեկցող փաստաթղթերում առկա տեղեկատվության հիման վրա «1.3» կետի համապատասխանությունը որոշելու անհնարինության դեպքում՝ մատակարարված ապրանքների «1.3» կետին համապատասխանությունը հավաստող փաստաթուղթ՝ տրված արտադրողի կամ նրա պաշտոնական ներկայացուցչի կողմից:

Օրենքի 50-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ ենթակետի համաձայն՝ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին բողոքը ներկայացվում է գրավոր, ստորագրված, դրանում ներառելով՝ ... բողոքի փաստացի և իրավական հիմքերը, ապացույցները:

Վկայակոչված հոդվածի վերլուծությունից հետևում է, որ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը բողոքի քննությունը հարուցում և իրականացնում է միմիայն ներկայացված բողոքի հիման վրա և ենթակա է քննության միայն դրա սահմաններում: Ընդ որում, բողոք ներկայացնելով՝ շահագրգիռ անձն ինքնուրույն է որոշում իր բողոքի պահանջի շրջանակը, ինչը տնօրինչականության սկզբունքի դրսևորման արդյունք է, որն անձի՝ ՀՀ Սահմանադրությամբ և օրենքով նրան տրված հնարավորությունն է սեփական հայեցողությամբ տնօրինելու իր նյութական և դատավարական (ընթացակարգային) իրավունքները և դրանց պաշտպանության եղանակները:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում արձանագրել, որ բողոքի փաստացի և իրավական հիմքերը, ապացույցները ներկայացնելու պարտականությունը դրված լինելով բողոքաբերի վրա, վերջինս է հանդիսանում շահագրգիռ այն անձը, ով, ինքնուրույն որոշելով իր բողոքի պահանջի շրջանակը, պետք է բողոքի հետ միաժամանակ ներկայացնի փաստացի և իրավական հիմքերը, ապացույցները՝ որպես բողոքի բավարարմանն ուղղված էական նշանակություն ունեցող հիմքեր ու հիմնավորումներ: Ընդ որում, օրենսդիրը չի սահմանափակում բողոքի փաստացի և իրավական հիմքերը, ապացույցները ներկայացնել միայն բողոքի հետ միաժամանակ, այլև բողոքաբերը կարող է ու գրկված չէ լրացնելու/փոփոխելու/նվազեցնելու բողոքի փաստացի և իրավական հիմքերը, ապացույցները գործի քննության ընթացքում:

Զարգացնելով վերոգրյալ իրավական դիրքորոշումը՝ Բողոքներ քննող անձը հարկ է համարում փաստել նաև, որ փաստացի և իրավական հիմքեր, ապացույցներ ներկայացնելու պարտականությունը կրում է նաև բողոքի քննությանը ներգրավված յուրաքանչյուր անձ և վերջինիս իր առարկությունների հիմքում ընկած փաստական հանգամանքները, որոնք ուղղված են բողոքով վկայակոչված փաստերի հերքմանը, պետք է նույնպես պարունակեն, ըստ էության, Օրենքի 50-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ ենթակետով սահմանված դրույթներով նախատեսված փաստացի և իրավական հիմքեր, ապացույցներ:

Վերոգրյալ իրավական կարգավորումների և վերլուծությունների արդյունքում՝ Բողոքներ քննող անձը հարկ է համարում փաստել, որ բոլոր այն դեպքերում, երբ բողոքը ներկայացրած անձը բողոքարկում է գնման առարկայի բնութագրերը, նախաորակավորման հայտարարության կամ հրավերի պահանջները, մասնավորապես՝ երբ բողոքի վեճի առարկան հանդիսանում է հրավերում առկա որևէ պայմանի՝ գնումների օրենսդրությանը հակասելու հանգամանքը, ապա այդ՝ բողոքով վկայակոչված փաստական հանգամանքի ժխտման ապացուցման բեռը պետք է կրի պատվիրատուն, քանի որ Կարգի 22-րդ կետի իմաստով գնման առարկայի բնութագրերը սահմանելիս պետք է հաշվի առնել, որ դրանց պետք է բավարարեն մեկից ավելի հնարավոր մասնակիցներ և արտադրողներ: Ուստի, նման դեպքերում, բողոքի քննության ընթացակարգին մասնակցող պատվիրատուն է պարտավոր ապացուցել իր՝ հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի պահանջների և բողոքի առարկությունների հիմքում դրված ու գործի լուծման համար նշանակություն ունեցող փաստերն ու գնումների մասին ՀՀ օրենսդրությանը համապատասխանելու հանգամանքը:

Վերոնշյալ իրավական նորմերի ու փաստական հանգամանքների հիման վրա, դրանք համադրելով Պատվիրատուի և Ընկերության կողմից ներկայացված բողոքի իրավական ու փաստական հանգամանքներին, ինչպես նաև ուսումնասիրելով Ընթացակարգի հրավերի տեխնիկական բնութագիր - գնման ժամանակացույցով սահմանված պայմանները՝ Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ տվյալ դեպքում, Պատվիրատուն Բողոքներ քննող անձին ներկայացրել է վերաբերելի և բավարար ապացույց առ այն, որ վերջինիս կողմից թույլ չի տրվել Օրենքի 13-րդ հոդվածով սահմանված դրույթների խախտում՝ հնարավոր մասնակիցների մրցակցության հավասար պայմանների խոչընդոտման առումով, և որ «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-22-9/16» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերի Հավելված 1-ով նախատեսված՝ տեխնիկական բնութագիրը այդ մասով կազմված է և համապատասխանում է Օրենքի 13-րդ հոդվածի և Կարգի 21-րդ և 22-րդ կետերի դրույթներին, սահմանված տեխնիկական բնութագրում առկա պայմանները չեն խոչընդոտում հնարավոր մասնակիցների մրցակցության հավասար պայմաններ ունենալու իրավունքը:

Ինչ վերաբերում է Ընկերության կողմից 01.04.2022թ.-ին ներկայացված բողոքի լրացմանը, ապա Բողոքներ քննող անձն այն քննարկման առարկա չի դարձնում, քանի որ ՀՀ ֆինանսների նախարարի 06.12.2018թ.-ի թիվ 600-Ն հրամանով հաստատված «Գնումների հետ կապված բողոքներ քննող անձանց գործունեության» կարգի 19-րդ կետով սահմանվել է, որ Անձը պարտավոր է որոշման մեջ հիմնավորված և պատճառաբանված ձևով անդրադառնալ բողոքարկման գործընթացի կողմերի՝ մինչև բողոքը բավարարելու կամ մերժելու մասին որոշում կայացնելու նպատակով հրավիրվող նիստի անցկացման մասին հայտարարությունը տեղեկագրում հրապարակվելուն հաջորդող օրը ներառյալ ներկայացրած փաստաթղթերում, գրավոր դիրքորոշումներում, ներկայացված ապացույցներում բերված բոլոր փաստարկներին, տեղեկագրում և/կամ էլեկտրոնային գնումների համակարգում հրապարակված նյութերին:

Բողոքներ քննող անձը փաստում է, որ վերոնշյալ դրույթը ինքնանպատակ չէ և ուղղված է ապահովելու հենց առաջինը բողոքարկման ընթացակարգին ներգրավված կողմերի հավասար մրցակցության իրավունքը, քանի որ յուրաքանչյուր կողմ իրավունք ունի ծանոթանալու և իր դիրքորոշումը հայտնելու մյուս կողմի կողմից ներկայացրած ցանկացած փաստաթղթի: Իսկ սույն դեպքում՝ Ընկերությունը բողոքի լրացումը ներկայացրել է որոշման հրապարակման նույն օրը, որը չի կարող Բողոքներ քննող անձի կողմից դիտարկվել

(քննարկման առարկա դարձվել)՝ վերը նշված պատճառաբանություններով պայմանավորված:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում՝ Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ «Մեղէքսպերտ» ՍՊԸ-ի կողմից 11.03.2022թ.-ին ներկայացված բողոքով բերված փաստերն ու հանգամանքները՝ հնարավոր մասնակիցների մրցակցության հավասար պայմանների խոչընդոտման առումով, հիմնավոր չեն, իսկ Ընթացակարգի պահանջները հիմնավոր են: Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից թույլ չի տրվել Օրենքի 13-րդ հոդվածով և Կարգի 21-րդ կետով սահմանված պահանջների խախտում, որպիսի պայմաններում ՀՀ պաշտպանության նախարարության կողմից հայտարարված «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-22-9/16» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգն ենթակա չէ չկայացած հայտարարման:

Ուստի, վերը բերված եզրահանգումների ու դատողությունների հիման վրա՝ Բողոքներ քննող անձը փաստում է, որ «Մեղէքսպերտ» ՍՊԸ-ի կողմից 11.03.2022թ.-ին ներկայացված բողոքը պետք է մերժել:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը,

Ո Ր Ո Շ Ե Ց

«Մեղէքսպերտ» ՍՊԸ-ի կողմից 11.03.2022թ.-ին ներկայացված ԳԲՔԱ-ԼՕ-2022/27 ծածկագրով բողոքը մերժել ամբողջությամբ՝ անհիմն լինելու պատճառաբանությամբ:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

**ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆԶ՝**



ԼԵՎՈՆ ՕՍԿԱՆՅԱՆ